

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ՀԱՆՆԻՔԷՍ

Ազգային, Գիտական, Գրական եւ Քաղաքական

ԻԱ. ՏԱՐԻ — ԹԻԻ 26

||

ՅՈՒՆԻՍ 28 1903

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

Մարդկային հորիզոնին ընդլայնումը (Բ.)
Քարոզիչ Ֆարրար (Ուսումնասիրութիւն) . — Իր
կեանքը

Յաջողուած կեանք մը (Նորալիպ օսար կեանք)
Թրզմ.

Նիակարայի ջրվեժը (մօտէն դիտուած) . — Իր հրաշա-
գեղ տեսարանները

Հայեացքներ . — Սկզբունք մը

Զարլս Հէօթն Սքրնընի կեանքը

Աւխարհի ամենամեծ հսկան . — Բնութեան մեկ զար-
տուողութիւնը

Աւխարհի ամենասարօրինակ մարդը՝ որ 300 տարի
պիտ ապրի

Վեր. Ա. Կ. Պետիկեանի յիշատակին

Պրուսայի Որբանոցին ՉՅրդ տարեկան հանդէսը

Ելեկտրականութեան փորձեր

Իզմիտեանց զրական հանդէսը = Հետաքրքրուած նորութիւններ = Քաղաքական

ՅԱԿՈՒՅՈՍ Հ. ՃԷՃԻԶԵԱՆ

ԲԱՔԳԷՆ ՎԱՐԴ

Ա. ՈՍԿԵԱԿ

ՆԱՐԳԻՍ


ԱՐՍԷՆ

Ա. Մ. ԹՈՐՈՍԵԱՆ

ԶԱՊԷԼ

Հատը 40 փարա

ՏԳԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ԳԷՐԳԷՐԵԱՆ



Ազգային, Գրտական, Գրական եւ Քաղաքական

ԻԱ. ՏԱՐԻ — ԹԻԻ 26

||

ՅՈՒՆԻՍ 28 1903

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ԲԻԻՐԱԿՆ Շաբաթերի Տարեկան բաժնեգինն է Պոլսոյ եւ Գաւառներու համար 50 դրո., Արսասահմանի համար՝ 5 ռուպլի. կամ 12 Ժանք կամ 2 1/2 տոլար, քրթասաւարեան ծախք մեր վրայ:— 2. Ձեռնէ կը ծախուի հասք 40 փառայի: — 3. « ԲԻԻՐԱԿՆ » ի վերաբերեալ բաժանորդագին, նամակ կամ ո եւ է գրութիւն պէտք է ուղղել Կ. Պոլիս, Պայայ Հաուսի միջոցաւ՝ Ռուպերդ Գօլէն, Բրօժ. Յակոբոս Հ. Ճէնիզեանի. — 4. Անվճար նամակ կամ գրութիւն չընդունուիք. — 5. Տասր օրինակի բաժանորդ գտնողին մէկ օրինակ նուէր կը տուի :

ՍԱՐԴԿԱՅԻՆ ՀՈՐԻԶՈՆԻՆ ԸՆԴԱՅՆՈՒՄԸ

Բ.

Մարդիկ հայեցողութիւններ ունեցած են այս խնդրոյն վրայ եւ ջանացած են զայն հասկնալ ամենաճիշտ ժամանակներէ ի վեր: Կերեւայ թէ սահմանուած է որ անոնք մտածեն այս մեծ խնդրոյն վրայ, եւ ջանան հասկնալ զայն, և եթէ սահմանուած է որ մտածեն անոր վրայ, երբեք թոյլ տրուած չէ՞ և պիտի չտրուի՞ զայն հասկնալ: Աս է առաջին խնդիրը որ գրաւեց մեծ Յոյն խորհողներու միտքերը, որոնց խօսքերը արձագանգի մը պէս կուգան հիմա մեզի այն հին ժամանակներէն. և յիշաւի գրեթէ ուզգակի դիտողութիւններ կ'ընեն այն գիւտերուն վրայ զորս մեր օրերու գիտնականները կատարած են: Անոնք փրկողութեան իրերուն մեծ ծագումը, սկզբնաւորութիւնը, սկզբունքը: «Ամէն բան ջուր»

գրեց Թադէս. «Ամէն բան կրակ է» մտածեց Հերաքլիթոս. եւ դարձեալ «ամէն բան մակընթացութեան և տեղատուութեան շարունակական վիճակի մը մէջ է»: Անաքսիմանտէր կ'ըսէր թէ վարիչ սկզբունքն է մէկ անորոյ, չսահմանուած բան մը, բան մը որ թերեւս գոհացուցիչ բացատրութիւն մը չստացուի, բայց այսչափ դարերու հետազոտութենէ վերջ հիմա որչափ աւելի մօտ ենք գոհացուցիչ բացատրութեան մը: Եւ վերջապէս, այս մեծ Յոյն փիլիսոփաներուն եզրակացութիւնները չէ որ կը պարունակեն այն եզրակացութիւնները՝ որոնց հասած են «բաթիում»ի և եթերի յատկութիւնները գտնողները. չէ՞ որ կը համաձայնին անոնք այդ եզրակացութեանց հետ: Կայ, պետք է որ ըլլայ մէկ հիմնական սկզբունք մը, արդ-

եօք ճօճումներու աստիճանաց անհուն շարք մըն է, տեսակ մը մշտնջենական շարժո՞ւմ, յաւիտենական բարախո՞ւմ մը՝ որ տեղ մը կը կայնի, տեղ մը կը զօրանայ, անհուն մեղեդիի մը բոլոր զանազանութիւններով, և թերեւս մեղեդիի միակ էութիւնը ինք ունենալով։ Մենք այսօր երեք հազար տարի առաջուան Յոյներէն աւելի խորունկ չենք կրնար խորհիլ՝ և աւելի խորերը գացած ալ չունինք։ մարդոց միտքը հիմա այն ատենէն աւելի խորունկ կերպով չկրնար նայիլ իրերուն խորը, եւ Հերաքլիթոսի վարկածը թէ ամէն բան մակընթացութեան եւ տեղատութեան վիճակի մը մէջ է, այնպիսի վարկած մըն է որ գրեթէ կարծես բնական է խորհող մտքի մը համար։ Մարդուն կարծիքը միշտ այսպէս պիտի ըլլայ կարծես․ ատիկա իրեն բնական և հաւանական կ'երեւայ։

Յօդուածագիրը յետոյ կը հարցնէ թէ արդեօք բնական աշխարհին մէջ ապագային կատարուելիք գիւտերը պիտի բերե՞ն երբեք մէկ մեծ յայտնութիւն մը, մէկ անհուն բացատրութիւն մը այն խնդիրներուն զորս մարդիկ միշտ հարցուցած են Աստուծոյ եւ ինքզինքնուն, իրենց էութեան նշանակութեան նկատմամբ, ու յետոյ կը յարէ թէ՛ եթէ մարդիկ գիտնային այս ամէնը ալ մարդ պիտի չըլլային։ Ալ պիտի չվստահային մահէն, քանզի «մարդիկ կը վախնան մահէն, ինչպէս տղաք կը վախնան մութին մէջ քալելէն», ինչպէս կ'ըսէ Պէյքըն։ Եթէ մահը կը նշանակէ միայն մէկ սենեակէն սիւսը անցնիլ, ո՞վ պիտի վախնայ մեռնելէն։ Անստգութիւնն է որ մարդիկը կը կապէ իրենց ունեցած կեանքին։

Ստոյգ է, սակայն, որ հորիզոնը շարունակաբար ու մեծապէս ընդարձակուելու վրայ է։ Յոյները բան մը չէին գիտեր «բատիոմ»ի և կամ Բէնթիկէնի ճառագայթներուն վրայ։ Եթէ գիտնային, արդեօք կարող պիտի ըլլային՞ աւելի խորունկ ու մարդուն համար աւելի արժէքաւոր կերպով խորհիլ։ Թերեւս պիտի չկրնային։ «Երբոր

ես տղայ էի» կ'ըսէ, Պլատոն, ահագին բաղձանք մը ունէի գիտնալու փիլիսոփայութեան այն ճիւղը որ կը կոչուի բնական գիտութիւն։ Ինծի անանկ թուեցաւ որ բարձր նպատակներ ունի ան, այն գիտութիւնը ըլլալով՝ որ իրերուն պատճառներուն հետ գործ ունի, և որ կը սովորեցնէ թէ իր մը ինչու կայ, և ինչո՞ւ կը ստեղծուի և կը կորսնցուի․․․ Ու յետոյ յառաջ անցայ քննելու անոնց եղծանուածը, յետոյ անցայ երկինքի ու երկրի իրերուն ու վերջապէս եզրակացուցի թէ բոլորովին ու բացարձակապէս անկարող էի ես այս քննութիւններուն։ Այս տեսակ բաներու վրայ գրողներուն մէջ Պլատոնէն աւելի մեծ խորհող մը եղած չէ․ ան յուսահատ կ'երևայ, սակայն մենք տակաւին կը հարցնենք թէ պէտք չէ՞ որ մէկ մեծ նպատակ մը ըլլայ Ֆիզիքական աշխարհին այս շարունակական յայտնութեան ետեւը, ու կը հաւատանք ալ թէ կայ ատանկ նպատակ մը։ Սըր Թոմաս Պրատունի ըսածին պէս «անոնք կրնան հոգիներու շնորհալի յայտնութիւնները ըլլալ»։ Եթէ պիտի հաւատանք ատանկ մեծ նպատակի մը, անոնք պէտք է որ մէկ մասը ըլլան այն բացատրութեան որ պիտի հասկննէ մեզի իրերուն ի՞նչ ըլլալը։ Կարելի է որ հարիւր, հազար կամ տասը տարի վերջ իրերու բացատրութիւնը աւելի պարզուած ըլլայ․ բայց Կենաց Ծառը միշտ պիտի մնայ բան մը ուրկէ մարդիկ պիտի վախնան։ «Եթէ ինծի տային մէկ կողմէ բոլոր գիտութիւնը, ըսաւ գերման փիլիսոփան, ու ու միւս կողմէ մաս մը գիտութիւն միայն, ես պիտի ընտրէի մաս մը գիտութիւնը, քանզի բովանդակ գիտութիւնը միայն քեզի կը վայելէ, ո՞վ Տէր»։

ՅԱԿՈՒԲՈՍ Հ. ՃԷՃԻՉԵԱՆ

Տ Ղ Ո Ց « Բ Ի Խ Ր Ա » Մ Ը

Բարիգեան օրագրող մը, Պ. Վիթէպպօ, Շան գ'ելիդէի մէջ հաստատած է տղոց «քիւպ» մը։ Շատ չքեղ շէնք մըն է ան եւ ունի պարտէզ մը և խաղարան, ուր ամէն տեսակ մարմնամարզական փորձեր կրնան կատարուիլ։ Ունի նաեւ սրճարան մը, ուր «քիւպ»ին անդամներուն եւ անոնց ծնողներուն կը ծախուին անուշեղէններ, քիւքարներ, թէյ, եւ տեսակ տեսակ զովացուցիչներ։ «Բիւպ»ին նպատակն է՝ աղաքը պզտիկուց մարդ ընել։

ՔԱՐՈՋԻՉ ՓԱՐՐԱՐ

Ա. — Ի Ր Կ Ե Ա Ն Ք Ը

Անգլիոյ նշանաւոր քարոզիչներէն, Սըըր-
ճընէն Էտքը, Ֆարրարն ալ վախճանեցաւ,
այս տարի՝ Մարտ ամսու 22 (Ը. Ե.) ին
Քէնթըրպրիի մէջ, 72 տարեկան:

Ֆարրար աւելի Ռուսահայոց ծանօթ է
քան Թրքահայոց. վասնզի իր երկու գոր-
ծերը Ռուսահայք հայերէնի վերածեցին: Ա-
ռաջին գործը, որ Ֆարրարի գլուխ-գործոցը
կը համարուի, է՝ Life of Christ (Յիսուս
Քրիստոսի կեանքը), զոր թարգմանեց Գար-
րիէլ քահանայ Տէր-Գարրիէլեանց եւ լոյս
տեսաւ 1899ին, Թիֆլիս, Ս. Մարտիրոս-
եանց տպարանէն: Այս գիրքը հրատարակ-
ուած է Մայր Աթոռոյ տպարանէն,
Ամենայն Հայոց Կաթողիկոսին թոյլ-
տուութեամբ եւ նուիրուած է Նորին Օ-
ծութեան: Միւս գործն է՝ Ֆարրարի Քա-
րոզները, զոր թարգմանած է Ս. Մ. որ
դարձեալ կը հրատարակուի Ն. Օծութեան
թոյլտուութեամբ 1901ին, Նոյն իսկ Մայր
Աթոռոյ Տպարանէն՝ բարերարի մը, Տիգրան
Ափրիկեանցի ծախքով:

Պէտք է դիտել որ երկու գործերն ալ
թարգմանուած են «Ռուսերէնից» եւ ո՛չ թէ
անգլերէնէ:

Այդ թարգմանութիւններէն առաջին ան-
գամ Յիսուս Քրիստոսի կեանքը կարդալով
չինձ էի Ֆարրարի մասին գաղափար մը,
այնպէս որ Անգլիացի քարոզիչը կ'երեւակա-
յի յաջող իր բեմին վրայ, ժողովրդական
մակարդակի վրայ ազդու եւ յորդ լեզուաւ
խօսող մը: Ասկից զատ շինած էի ինքնին
կաղապար մը Ֆարրարի դէմքին ու կեց-
ուածքին:

Իր քարոզներն ալ կարդալով՝ իր մասին
չինձ գաղափարս աւելի եւս հաստատուե-
ցաւ: Իր Life of Christ ապրող գործերէն է
եւ կրնայ, պատմական եւ բանասիրական
տեսակէտով, զուգակշռել է. Ռընանի Vie
de Jesus: Ֆարրար բողոքական հաւատաց-
եալ մ'է եւ կ'գրէ իր համոզումներուն, իր
ուսումնասիրութիւններուն եւ իր քննու-

թիւններուն թափովը. է. Ռընան, ոչ-
հաւատացեալ մը, կ'գրէ իր պատմաքննա-
կան սկզբունքներուն բոլոր ուժովը:

Դիտելով իր կենդանագիրն ալ The
Christian Herald (1903, Ապրիլ 2, թիւ
14)ի առաջին երեսին վրայ, անդրադարձա
որ շինած կաղապարս ճիշտ չէր:

Երեւակայեցէ՛ք կիսադէմ գլուխ մը խո-
շոր և ձեւաւոր, ճաղատ և գրեթէ ճերմկցած,
ու լայնանիստ դունչ մը. թաւ յոնքեր,
ածիլուած պեխեր եւ երկու ծնօտներէն
վար թափուած պեխառն կիսամօրուքներ՝
կ'ըրացնեն այս ալպիոնեան profile:

* * *

Քրիսչըն Հեքլըի հրատարակած կենսա-
գրական տեղեկութիւններէն կ'հասկնանք
թէ Ֆրէտէրիք Ֆարրար սերած է Ս. Դաւ-
թի եպիկոպոս, Ռոպըրթ Ֆարրարի ցեղէն,
եւ որդին է Rev. G. R. Farrarի, որ ա-
տեն մը Քէնթի մէջ վարած է Սիտքըրը, և
իր զաւկին ծնած ատեն, 1831 Օգոստոս 7,
միսիօնար էր Պոմպէյի մէջ: Ֆարրար ընտա-
նիքը Անգլիա կ'վերադառնայ եւ Ֆ. Ֆար-
րար Այլէզպուրիի (Aylesbury) մէջ Դասական
Տարրական նախակրթարանը կ'մտնէ (Latin
Grammar School), անկից ալ Մէն
Կղզի (Isle of Man) կ'անցնի եւ կ'աշակեր-
տի King William գոլէճին: Տարի մը ետքը
Ֆ. Ֆարրարին ծնողքը Հնդկաստան կ'վերա-
դառնան, ինքը Գոլէճի մէջ կ'մնայ իբր թո-
շակաւոր, մինչեւ իր 16 տարեկան հասակը:
Ֆարրար այս դպրոցին մէջ է որ զարգացուց
իր սքոլաստիքական յատկութիւնները, ո-
րոնցմով մեծ համբաւ չինեց ետքը եւ զըպ-
րոցը ձգելէ շա՛տ առաջ առաջին տեղը
գրաւած էր սրդէն հո՛ն:

Ֆ. Ֆարրար անխոնջ էր և աշխատելու
համար անսահման փափաք ունէր: 1852ին,
Քէմպլըրիճի Երրորդութիւն գոլէճը (Trinity
College) կը մտնէ, շա՛տ մը մրցանակներ
կ'առնէ հո՛ն եւ մերջնապէս Անդամ (Fellow)
կ'ընտրուի անոր:

Կօտան եպիսկոպոս կը խնդրէ Ֆարրարէն

որ օգնական ըլլայ իրեն Մարրլպորո (Marlborough) գոլէճին մէջ: Դպրոցը աւարտելէ ետքը Ֆարրար կ'ընդունի առաջարկը: 1855ին Տօքթ. Վօն (Vaughan) երիտասարդ փայլուն վարպետը Հարրո (Harrow) կը հրաւիրէ ո՛ւր 15 տարիներ յիշատակելի գործեր կը տեսնէ, միշտ բարձր բռնելով այդ մեծ դպրոցին համբաւը եւ բարոյական մակարդակը: 1871ին կը թողու Հարրօն և Մարրլպորօյի մէջ ուսուցչապետ (head master) կ'ըլլայ, հինգ տարի շարունակ:

Տօքթ. Ֆարրար կը ձեռնադրուի 1857ին, բայց հովուական ո՛ւր և է պաշտօն չստանձնելու եկեղեցւոյ մէջ, մինչև 1876, ո՛ր ատեն Ուէսթմինսթրի Արքայաբանին մէջ կանոնիկոս և Ս.Մարգարիտի ժողովրդապետ (rector) կ'ըլլայ: Այս պաշտօններուն մէջ է որ Տօքթ. Ֆարրար կը ճանչցուի իբր ժողովրդական քարոզիչ: Իր նկարագրի ոճը, իր առատ ընթերցումներն ու կոչումներու յարմարութիւնը, կարկառուն կէտերն ըմբռնելու և եւ զանոնք ընդլայնելու մէջ իր կարողութիւնը, օրուան ատենաբաններու մէջ առաջին տեղը կուտան իրեն: 1883ին Ուէսթմինսթրի Աւագ սարկաւագ կ'ըլլայ եւ 1890էն մինչև 1895 Երեսփոխանական Ժողովին (House of Commons) տաներեցութիւն (Chaplaincy) կ'ընէ:

Բայց Երիցապետ (Dean) Ֆարրար մի միայն իբր քարոզիչ չէ՛ որ կ'ազդէ Ուէսթմինսթրի մէջ. լման կ'կատարէ ա՛ն իր պարտականութիւնները՝ ծանրաբեռնուած հովիւի մը պէս. ցաւակցելով իր ժողովուրդի ցաւերուն, կ'մխիթարէ, կ'օգնէ եւ կ'յանդիմանէ ի հարկին:

Տօքթ. Ֆարրար Լոնտոն մտնելէ անմիջապէս ետքը ջերմապէս կ'ըբաղի գինեհասուքեան գործով. իր առաջին ատենաբանութեան մէջ կ'ըսէ թէ ազէտ մ'էր ա՛ն իր ազգին համար: Տիկին Ֆարրար Ուէսթմինսթրի հիւանդանոցին այցելած ատեն գիտով մը զետին փռած է զանի. Իսկ ինքը՝ Ֆարրար՝ կին մը տեսած էր, որ թէեւ իր նակըններուն դպրոցական թոռակը կ'անճրկէր

վճարելու, բայց սոսկալի արբեցող մ'էր՝ Այս իրողութիւնները զօրաւոր հակալքօւական պայքարի մը կը մղեն Ֆարրարը:

Ֆարրար ա՛յնքան կ'յառաջանայ որ Անգլիոյ թագուհիին տաներէց կ'ըլլայ. Բայց չլլանար այս դիրքէն, վասն զի երբեք չէր հպարտանար եւ թագուհիին առջեւ իր այնքան յարգուած դիրքին ու պաշտօնին նախանձելի եւ հետաքրքրական կողմերուն վրայ չէր ուղեր խօսիլ ընկերութեան մէջ:

Անգամ մը միայն չէ՛ յարգած Ֆարրար իր այս սկզբունքը պատմելու համար Վիթթորիա թագուհիին քրիստոնէական կեանքէն դէպք մը:

Քէնթըրպրիի Մայր Եկեղեցւոյ մէջ, պաշտամունքի ատեն, կ'ըսէ Ֆարրար, թագուհին՝ Քրիստոսի երկրորդ զալստեան վրայ իր խօսած մէկ քարոզը մոտիկ ընելէ ետքը ըսած է. «Oh, how I wish that the Lord might come during my life time». «Ա՛հ, երանի թէ Քրիստոսի գալուստը իմ ժամանակ տեղի ունենար»: «Ինչո՞ւ համար, կը հարցնէ, քարոզիչը, Ձեր վեհափառութիւնը այսքան ջերմեռանդ կերպով կ'ըբաղձայ ատոր»: Թագուհին փայլուն կերպարանքով մը և խորին յուզմունքով մը կ'ըսէ. I should so love to lay my person at His feet». «Ո՛րչափ պիտի փափաքէի իմ անձս Անոր ոտքերուն տակը դնել»:

Ֆարրար սարկաւագ էր եւ իր առաջին քարոզովն իսկ թագուհիին ուշադրութիւնը գրաւած էր: Ֆարրար 1854ի Ծնունդին ձեռնադրուած՝ նոյն օրը քարոզի կը հրաւիրուի Սալըզպըրիի մատրան մէջ (Imfirmary Chapel of Salisbury Work. House), կէս ժամ ունէր պատրաստուելու համար: Ֆարրար այդ կարճ միջոցին մէջ կարելի եղածը գրի կ'առնէ. թէև իր համբաւը արդարացունելու եւ շեշտելու չափ բան մը չէր գրած և խօսածը, բայց երիտասարդ քարոզիչը, մեծ ապագայ ունէր. թագուհիին առջեւ պիտի խօսէր երկար ատեն. ահագին բաղմունքիւններ իր շրթներէն պիտի կախուէին:

Ֆարրար՝ իր կեանք շինող ազգեցութիւն-

ներու մէջ ամէնէն առաջինը ու ամէնէն կարեւորը իր մօրը կուտայ: «Կրնամ յիշել մօր մը նկարագիրը, որ մեռաւ զրեթէ երեսուն տարի առաջ. բայց իմ կրած տպաւորութիւնները թարմ են զեռ երէկուանին պէս: Ես երբեք չեմ խօսած, կ'ըսէ, ներս վրայ, բայց գիրք մը նուիրած եմ իր յիշատակին: Նէ աշխարհի մէջ ապրած է խիստ աղքատութեան, մթութեան եւ նեղութեան մէջ: Յիշատակելի բան մը չէ՛ ունեցած աշխարհի մէջ. բայց նէ թողած է զաւակ մը, որ սրբուհիի մը յիշատակները կ'վերակենդանացնէ»:

ԲԱՐԳԷՆ ՎԱՐԳ

ՆԻԱԿԱՐԱՅԻ ԶՐՎԷԺԸ

ՄՕՏԷՆ ԴԻՏՈՒԱԾ

ԻՐ ՀՐԱՇԱԳԵՂ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԸ

Ինչպէս Նոր Աշխարհի նոյնպէս Հին Աշխարհի բնական հրաշալիքներուն մէջ միակն է հսկայ Նիակարան: Իր այս տիեզերահռչակ համբաւին պատճառը, իր ակնախտիղ բարձրութիւնը չէ, որովհետեւ թէ՛ հին եւ թէ՛ նոր աշխարհներու մէջ կան շատ ջրվէժներ որոնք կը գերազանցեն զայն, ինչպէս Ափրիկէի Վիքթորիա ջրվէժը, Ալպեաններու վրայի Սթոպպագգան, Սիէրրա Նէվատա լեռանց վրայ գտնուող ջրվէժը: Ան հիանալի է իր ջուրի ահագին քանակութեան սոսկալի գահավիժումով, ահաւոր արագութեամբ, սքանչելի տեսարաններով և ամէն այն գեղեցկութիւններով՝ որոնք իրեն կուտան երզական գիրք մը իր նմաններուն մէջ: Զուրի տարրին ցամաքի վրայ ամենացայտուն պատկերն է ան: Իր ահաւոր եւ հիանալի գահավիժումը ապառաժներու վրայէն, ծիածանի երեւոյթները իր ոտքին տակ, իր ջուրերուն փոշիանալով բիրեղանման տեսիլքը, լուսնի և արեւու ճառագայթներուն պատճառած ակնապիչ տեսարանները, մանեակներն ու արեւակները, մեծաքանակ կախուող սառոյցները ձմրան ատեն եւ ամէն այն հիանալի տեսարանները՝ զորս կը ցուցադրէ ան, պարզապէս սքանչելի են:

Այն հինգ մեծածաւալ լիճերը՝ որոնք Միացեալ Նահանգներուն եւ Գանատայի սահմանը կը գծեն, ծնունդ կուտան Նիակարա գետին՝ որ էրիէ լիճէն ծագում առնելով 34 մղոն կարճատեւ ընթացքէ մը վերջը՝ կը թափէ իր ջուրերը Օնդէրիօ լիճը:

Նիակարա գետին էրիէ լիճէն ծագումէն 20 մղոն հեռաւորութեամբ դէպ ի Օնդէրիօ լիճը՝ կը գտնուի հոչակաւոր ջրվէժը. եւ Նիակարա սոսկալի ապառաժներու վրայէն ահեղագոյ վար կը գահավիժի: Զրվէժը «Կօթ Այլէնտ» կոչուած կղզիով մը բաժնուած է երկուքի, որոնք կը կոչուին Ամերիկ. ջրվէժ և Զիու պայք ջրվէժ: Ասոնց վրայէն ջուրի երկու հսկայ բաժանումներ 1 մղոն լայնութեամբ, 25 ոտք խորութեամբ և ժամը 1,000,000 տակառաչափ զանգուածով մը, սոսկալի ու անդիմադրելի արագութեամբ եւ ուժգնութեամբ վար կը խուժէ: Այս սոսկալի ուժգնութեան տակ ապառաժները պնդութեամբ եւ կարծրութեամբ կը տոկան, թէեւ ամէն տարի զրեթէ մէկ ոտք մաշելով:

Նիակարան առաջին անգամ տեսնողը եղած է Գաղղիացի վանական մը Հ. Հէննէրին անունով, 1878ին: Ան Հնդիկներուն կողմէ կը կոչուի Իրօգուա (ջուրի որոտում), որովհետեւ մղոններով հեռաւորութենէ հըսկայ Նիակարայի խլացուցիչ ձայնը կը լսուի որոտումի պէս:

Այս չքնաղ ջրվէժը ունի այնպիսի տեղեր, կէտեր ու երեւոյթներ՝ որոնք իսկապէս եւ գերազանցապէս զմայլելի եւ ապշեցուցիչ են:

Առաջնորդուելու պէտք չկայ. կրնանք ուղղուել, «ջուրի որոտման» խլացուցիչ աղմուկին, համակուած այն երեւակայութեամբ, զոր կ'առթէ ան: Ահա կը պարզուի առջեւնիս Նիակարայի փառաւոր եւ զմայլելի տեսարանը: Մեր նայուածքը կը սեւեռի ահաւոր հոսանքին, ցիրուցան կղզեակներուն, հսկայ կամուրջներուն, կատղած ալիքներուն, սեպացեալ ապառաժներուն, ահաւոր ու խոժոռադէմ գահաւանդներուն,

Ջուրի փոշենման ցայտքին, երփներանգ գունաւորումին ու զանազան աննախտիղ երեւոյթներուն:

Հոն առաջին տեղը՝ որ մեր ուշադրութիւնը կը գրաւէ ու հետաքրքրութիւննիս կը շարժէ, հսկայ Առկախ Կամուրջն է, 360 ոտք երկայն 27 ոտք լայն, կառուցուած 4 կամարներու վրայ, իւրաքանչիւրը 90ական ոտք: 25 սէնդի վճարումով կ'անցնինք: Կամուրջին վրայ ենք. Նիակարայի ամբողջ փառաւորութիւնը ու շքեղութիւն հոտ աչքի առջեւ կը պարզուի. պահ մը մտքերնուս մէջ մեծութեան, վեհութեան գաղափարները կ'արթնան: Ամենազմայլելի կէտն է, ուրկէ կընանք դիտել ջրվէժին վերի մասը. Ջուրի մոլեգնեալ, կատաղի, փրփրաղէզ ալիքներ կը խրկէ՝ որոնք արագասահ ու ըարկացայտ վար կը խուժեն, սքանչելի ու ահաւոր տեսարաններ ցուցադրելով. միւս կողմը յաջորդաբար կը տեսնուին ջրվէժին ուրիշ մասերը:

Անցնինք Փրօսփէզդ Բօինթ՝ տեսիլքի կէտը, ճշմարիտ սքանչելի կէտ մը, ուրկէ կը դիտենք Նիակարայի Ամերիկ. կողմէն Գանատական կողմը խուժելը, փառաւոր եղանակով մը: Ջուրի ահագին փրփրալից զանգուածներ անդադար, անհատում, խրլացուցիչ գոռում գոչումով կը թափին ժայռերէն վար՝ ահաւոր անդունդը ուր հազարաւոր նաւակներ բարկացայտ ու փոշիացեալ ջուրերուն վրայ կը պարեն: Ճէրրի հաւուղէն նաւարան, տեսակ մը զարմանալի կառքով մը ակնթարթի մը մէջ վար կ'իջնենք, յետոյ նաւակներով կը փոխադրուինք զանատական հողը, կառքեր հեծնելով կ'ուղղուինք դէպի քիյալ բօֆ: Աս գրեթէ ամենագեղեցիկ տեղն է ամբողջ Նիակարայի վրայ. տեսարանը անհունապէս գեղեցիկ, մոգիչ ու ներգործիչ է. փայլուն կանանչ ջուրերուն փառաւորապէս վար թափիլը, անոնց արձագանգները, գոռում գոչումը, զրաւիչ է: Ոչ մէկ բռո, ոչ մէկ բացատրութիւն կրնայ նկարագրել ընթացեան այս սքանչելիքը. մարդ կրնայ միայն տեսնել ու զգալ զայն: Թիյալ բօֆ այլեւս

տափակ ու ընդարձակ ժայռ մը չէ ինչպէս էր ատեն մը, ահագին մեծութեամբ հատակտորներ փրթելով ահռելի գոռում գոչումով վար ինկած ու գետինը դղրդած են, և հիմա ժայռը վայրահակ ու սեպացեալ երեւոյթ մը ունի: Հօրս Շու Ֆոլի մօտ տեսարանը ահաւոր է:

Կենալով Թիյալ Թօֆի եզրը կը տեսնենք ահագին շոգենաւակ մը՝ որ Սըսփեցըն Պրիճէն մեկնելով երկու ժամ ճամբորդած ու հիմա մէզի ու մշուշի ամպին մէջն է: Ան Տի մէյս օվ թը վիսք (մէզի զիցուհին) կոչուած շոգենաւն է որ հիմա մէզին ու մշուշին դէմ կը մաքաւի: Գերազանց, սարսուեցնող և հոգեյոյգ տեսարանն է զոր կարելի ըլլայ երեւակայել, օրօրուիլ ջուրի, մշուշի ամպին, երփներագ ծիածանին, փոշիացեալ կաթիլներուն մէջ և պահ մը ետքը արեւուն ճաճանչներուն դէմ փայլիլ, ջուրի հատիկներու մէջ, օ՛հ, սքանչելի, զմայլելի է:

Քիչ մը հեռուն կը գտնուի բազմաստիճան սանդուղ մը՝ ուրկէ անջրանցոյց հանդերձներով կ'իջնենք վար և կ'երթանք վայրահակ ահաւոր ապառաժին՝ Հօրս Շու Ֆոլի տակ: Տեսարանը վերջին ծայր մեծափառ է: Խոժոռ վար կախուող սպիտակ ջուրի թանձր սաւան մը - այնքան մօտ մեզի որ կ'զգանք ջուրի փոշենման կաթիլներուն մեր վրայ ցատկելը - խլացուցիչ գոռումով մը մեր ոտքերուն առջեւ կը թափի: Ինչուո՞ւն ոտք բարձրութիւն մը մեր վրայ կը հակի և եօթանասուն ոտք անդունդ մը վարը կը մնայ: Յառաջանանք դէպի Բրօքեֆը հաւուղ, անցնինք երեք էոյրերը, զմայլելի կղզիները, երթանք այրող ակունքը այն հետաքրքրաշարժ եւ զարմանալի վայրը, ուր ջուրը ծանրացած ծծմբային ջրածնի կազով՝ կրակ կ'առնէ, երբ լոյս տեսնէ և կայրի աժգոյն կապուտակ բոցով մը:

Վերադառնանք Ամերիկեան կողմը, թողունք Գանատան, անցնինք միւլֆումը՝ որ ճոխ հաւաքածոյ մը կայ թոչուններու, ձուկերու, և կենդանիներու: Յառաջանանք դէպի Ամերիզըն Ֆոլ, որուն ետեւէն կը

տեսնուին յաջարդարար փառաւոր և հոյակապ Ամերիկ. Պանդոնիները: Բլիֆֆըն Հաւուզ այցելելէ վերջ անցնի'նք Պեքն Ալլեմս, ուր կը գտնուին թէ տաք եւ թէ պաղ ջուրի լողարաններ: Հասանք Կօք Ալլեմս, որ ամենամեծ կղզին է Նիակարայի մէջ, եւ գեղեցկապէս զարգարուած բուսականութեամբ եւ ծառերով եւ ուրկէ կրնան տեսնուիլ Նիակարայի ամենագեղեցիկ տեսարանները:

Ասոր մօտ կայ Թրի Բրօձայլս, որուն մօտ կը գտնուի Լուսնային կղզին ուր կ'երեւայ լուսնային աղեղը ամիսը մէկ անգամ և արեգակնայինը միշտ կը տեսնուի, արեւին փայլած ատեն: Հովերու քարայրը՝ որ Լընա Ալլեմսի ստորոտն է, ամենագեղեցիկ ու դարմանալի տեղ մըն է: Ան կրաքարի վրայի ջուրի ազդեցութենէ յառաջ եկած է: Ասոր բերանը ջուրի թափանցիկ սաւանով մը գոցուած է և սոսկալի ճնշումին հետեւանքով քարայրը լեցուն է մշտատեւ փոթորիկներով: Գեղեցիկ ծիածան մը գոյնզգոյն կը դողդօջէ ջրափոշիի կաթիլներուն մէջ, երբ արեւը կը փայլի: Այս քարայրը վերջին տեղն է գրեթէ հետաքրքրութեան արժանի, բուն իսկ Նիակարայի մօտ:

Պահ մըն ալ դիտենք Նիակարան ձմրան մէջ: Յուրտին խստութեան պատճառով՝ կանանչ ջուրերը համակ սպիտակ սառոյցի փոխարկուած են. ջրվէժին ստորոտը՝ որ ամառը խլացուցիչ կը գոռար, հիմա լուռ է: Բարկութեամբ վար խուժող հոսանքին տեղ սառոյցէ կամուրջ մը կազմուած է՝ որուն տակէն ջուրը խուռ ազմուկով իր մըշտընջենական ընթացքը կը շարունակէ լսին: Երբ արեւը փայլի, մեծափառ ու ակնախտիղ տեսարան մը կը պարզուի ու երբ արեւու ճաճանջներ կը զարնեն սպիտակ սառոյցին վրայ, կը ծիրաներփնի ան եւ առոր մէջէն կարծես փողփողուն գոհարներ կը շողշողան:

Նուազ գեղեցիկ չէ Նիակարա գիշերը լուսնի լուսով: Լուսինը արծաթափայլ լոյս մը կը զեղու գեղեցիկ տեսարանին վրայ, եւ արծաթանման փոշի մը ու սոթգոյն գոյն մը կը ցանէ յստակ ու ակնախտիղ ջուրերուն վրայ:

ՆԱՐԳԻՍ

ՅԱՉՈՂՈՒԱԾ ԿԵԱՆՔ ՄԸ

(Ն Ո Ր Ա Վ Է Պ Օ Տ Ա Ր Կ Ե Ա Ն Ք Է)

Մեր մարդուն գրիչը սահեցաւ իր դողդոջուն մատներէն եւ փոքր շաչիւնով մը ինկաւ մեղանի արատներով ծածկուած գրասեղանին վրայ, հոն արդէն իսկ գտնուող շատ մը պատկերարիծերուն վրայ նոր բիծ մըն ալ աւելցնելով:

Մերուկը յոգնած եւ ուժասպառ դէպ ի ետեւ ծռեցաւ կրթնելու մաշած կաշիէ թիկնաթոռին, որուն մէջ տարիներով տքնութեան այնքան ժամեր վատնած էր, եւ իր աչքերը ձգեց պատուհանէն դուրս ամայի տեսարանին վրայ: Նոյեմբերի սկիզբները՝ տարտամ ու անժպիտ օրուան մը վերջամուտն էր, եւ թուխ ամպերը կը կախուէին վերը՝ երկինքէն, ու վարը լոյսը կը նուաղէր գորշագոյն ու լերկ դաշտերուն վրայ: Բանի մը չոր ու յեանեալ տերեւներ վար կը գլորէին տժգոյն ծառերէն՝ որոնք ցուրտ հովին մէջ կը սարսռային:

Ուշացած թռչուններու հոյլեր որոնք արագօրէն դէպ ի հարաւ կը թռէին, դուրսը տեսնուած կեանքի միակ նշոյն էին:

Եւ յոգնած դուրսի մեռելային տեսարանէն՝ աչքերը ձգեց քով քովի դուրած դէզ մը ձեռագիրներուն վրայ, որոնք խնամով շարուած էին գրասեղանին փոքրիկ դարակներուն մէջ: Նայեցաւ ու հառաչեց ծանրագին: Իր միտքը կ'անդրադառնար այն օրուան վրայ, երբ առաջին անգամ իր անթոռ մօտեցուց յղկուած գրասեղանին՝ որ դեռ նոր ելած էր ատաղձագործին խանութէն: Իր ցանցառ ու ձերմակ մագերը, խիտ ու սեւ էին այն ատեն, յոյսը ու տենչանքը կ'եռային իր լանջքին ներքեւ, զինքը առաջ մղելու դիւթիչ տեսիլներով: Ի՞նչ լաւ կը յիշէր, երբ իր թուղթի առաջին թերթը առջեւը փռած՝ անձկանօք գրիչը վեր առած էր: Մե՛ծ գիրք մը պիտի գրէր, գիրք մը որ պիտի խօսէր աշխարհի բոլոր մարդոց եւ կիներու սիրտերուն, գիրք մը որ ճշմարտութեան եւ առաքինութեան պատգամը պիտի հռչակէր ամբողջ աշխարի:

Ու տարիներով տքնեցաւ ան. շատ մը խոչընդոտներ ելան իր առջեւ, գրիչը յաճախ ընդհատեցաւ, եւ այն պատգամը որ իր սրտին մէջ կը վառէր՝ կարծես թէ երբեք իր գրչին միջոցաւ ճամբայ չպիտի կրնար գտնել զէպի անհամար ժողովուրդները: Սակայն ան աշխատեցաւ անընդհատ եւ յուսաց: Ու հիմա ակամայ, դառնութեամբ նայեցաւ այդ ձեռագիրներու ղէզին, որոնք այնքան տարիներէ ետքը՝ տակաւին անխօս ու անձայն կը կենային իր առջեւը: Անօգուտ է մտածեց ան, եւ տրտմագին դուրս նայեցաւ թուխ ամպերուն որոնք արեւմուտքի կողմը կը դիզուէին հիմա:

—Վաղը, ըսաւ, իմ տարիքս կ'ըլլայ եօթանասուն. իւրաքանչիւր տարի նոր յուուսախաբութիւն մը աւելցուցած է նախընթաց անյաջողութիւններուս վրայ: Անյաջողութիւն. որքա՞ն դառն է այդ բառը: Եւ իր յոգնած գլուխը ձեռքերուն մէջ առաւ: Անձայն սենեակին մէջ՝ հին մեծ ժամացոյցը իր թի՛ք-թա՛քը կը շարունակէր հեգնօրէն, կարծես ըսել ուզելով, ձա՛-խո՛ղ, ձա՛-խո՛ղ, ձա՛-խո՛ղ:

Ճիշդ այդ պահուն դուռը զարնուեցաւ: Ծեր մարդը վեր առաւ գլուխը տարտամ կերպով, սակայն ներս մտնելու հրաւէրը տուաւ այնքան ուրախ ձայնով մը որքան կարելի էր այդ վայրկեանին, և ոտքի ելաւ յարգանքով հիւրընկալելու համար իր այցելուն: Դպրոցականի երեւոյթով զեղեցիկ մարդ մըն էր եկողը, որ անձկութեամբ ծեր մարդուն ձեռքը ուժգին թոթուեց:

— Զիս չէ՛ք ճանչնար, ըսաւ ժպտելով միւսին այլայլեալ երեսն ի վեր:

Ծերը քննական ակնարկ մը դարձուց երիտասարդին վրայ և յետոյ մեղմիւ գլխու բացասական շարժում մը տուաւ:

— Վախնամ չեմ ճանչնար, ըսաւ:

— Բայց ես ձեզ կը ճանչնամ, ըսաւ նորեկը իր ծաւի աչքերովը ժպտելով կրկին կը յիշէ՛ք անարգուած, մոռցուած պզտիկ տղեկը, կիսամերկ, բոկոտն ու գլխաբաց, զոր տեսաք, կօշիկ ներկողի տուփ մը ուսէն կախած, գրածախի մը ցուցափեղկին առ-

ջեւը, ուր կեցած՝ ակորթանքով հոն շարուած գիրքերը կը դիտէր:

— Ի՞նչ, ըսաւ ծերը, յուզումով ու ապշած, փոքրիկ Թէ՞մը. անկարելի է որ դուք եղած ըլլաք Թէ՞մը:

— Բայց ես նոյնինքն եմ, ըսաւ միւսը տակաւին ժպտելով:

Ծերուկը կրկին թօթուեց անոր ձեռքը ուժգին կերպով, եւ ստիպեց որ նստի ու պատմէ իր կեանքը: Մարդը աթոռ մը մօտեցուց հին գրասեղանին ու նստաւ, եւ ձեռքը սիրուն ու շնորհալի կերպով մը մեւ լանի արատներով ծածկուած սեղանին վրայ դնելով ըսաւ.

— Նոյն հին գրասեղանն է որուն առջեւ նստեցայ այն հրաշալի գիշերը, երբ դուք զիս ձեր հետը հոս բերիք եւ ինծի ցցուցիք խել մը գիրքեր, որոնք ինծի թանկագին գանձերու տուներ ըլլալ կը թուէին, ու խոստացաք ինծի օգնել որպէսզի ես սորվիմ ինչ որ անոնք կը պարունակէին: Կը խորհէի թէ երկինք ինծի ատկէ աւելի լաւ բան մը չէին կրնար խոստանալ: Քանի՛ իրիկուններ հոս նստած եմ, գլուխս գրքի մը վրայ կախած, մինչ դուք գլխուս վերեւը կը կենայիք ու իմ դաստիարակութեան զժուարին ճամբորդութեանս արահետները կը հարթէիք, ցոյց տալով ինծի որ այս աշխարհիս մէջ, փոքրիկ, անօգնական եւ անպատասպար Թէ՞մին համար ալ տակաւին պատեհութիւն կայ յաջողելու:

— Անկէ ի վե՞ր, հարցուց ծերը անձկութեամբ:

— Ինծի համար ձեր գտած գիրքը առի ու յաջողեցայ նախակրթարանէն անցնելով գօլէճէն շրջանաւարտ ըլլալ: Այնուհետեւ գօլէճը ինծի առաջարկեց Մաթէմատիքի Բրօֆէսօրութեան պաշտօնը, ընդունեցի առաջարկը եւ տակաւին հոն եմ, ըսաւ երիտասարդը:

— Շատ ուրախ եմ, աւելցուց ծերունին սրտաբուխ: Դուք ազնուութեամբ յաջողած էք, մինչ ես չի՛ յաջողեցայ:

— Ես յաջողած եմ եւ դուք ո՞չ, գոչեց բրօֆէսօրը: Ի՛նչ կ'ըսէք, ինչ յաջողութիւն

որ ես ունիմ հիմա, ձեզի կը պարտիմ:

Ծերուկը լռեց վայրկեան մը, յետոյ շարունակեց մտածկոտ նայուածք մը նետելով հետունքը:

— Կը յիշե՞ք փոքրիկ Շաքսընը, հարցուց:

— Իմ կօշիկ ներկած օրերուս յաճախ կը տեսնէի զինքը փողոցին մէջ: Ի՞նչ վայրենի եւ զեղիս տղայ էր: Բարեկիրթ մարդիկ չէին ուզէր մինչեւ իսկ հետը խօսիլ, եւ ինք կ'ատէր զանոնք փոխադարձաբար: Երբեք ուրիշ դէմքի մը վրայ չտեսայ ատելութիւնն ու անտարբերութիւնը այնքան բացորոշ կերպով մարմնացած, որքան Շաքսընի վրայ: Կը յիշեմ, իրիկուն մը, որքա՞ն զարմացայ, երբ ըստ սովորականին, դասի եկայ եւ զինքը հոս գտայ: Այս հին գրասեղանին առջեւ նստած՝ ձեզի հետ կը խօսակցէր բարեկամաբար: Թէպէտև տղայ էի այն ատեն, սակայն նշմարեցի կակղցած նայուածքը իր դէմքին վրայ և մարդավայել որոշումին լոյսը որ կը փայլէր իր աչքերուն մէջ: Այլեւս վարժուեցայ տեսնելով զինքը այս գրասեղանին առջեւը նստած ամբողջ ձմեռը ու ես կը տեսնէի իր դէմքին վրայ երեւցող արտայայտութեան աստիճանաւոր բարեփոխութիւնը: Շարժէ շարժւի աւելցաւ այդ փոփոխութիւնը ու աւելի մարդավարի, աւելի ակնածանաչ եղաւ: Հինգ տարի վերջը նորէն զինքը տեսայ քաղաքին մէջ՝ ուր համեստ գործ մը կ'ընէր:

Բրօֆէսօրը կանգ առաւ: Ծերունիին դէմքը պայծառացաւ. անոր խորհուրդները անցեալին հետն էին հիմա:

— Կը յիշեմ ուրիշ իրիկուն մը, շարունակեց բրոֆէսօրը, երբ դուք ինծի ծրար մը թղթադրամ ցոյց տալով ըսիք թէ՛ ձամբորդութիւն մը պիտի ընէիք աշխարհի շուրջը և անոր հրաշալիքները պիտի տեսնէիք: Ի՞նչպէս ձեր աչքերը պայծառացան, մինչ կը պատմէիք ինծի ովկէանոսին, ծովուն, լեռներուն, օտար ժողովուրդներուն և շատ մը գեղեցիկ տեսարաններուն վրայ: Բայց շատ չանցած, իրիկուն մը, տըժգոյն ու հիւանդոտ մարդ մը եկաւ որուն աչքերուն մէջ հանճարի հուրը կը վառէր:

Իր խօսակցութենէն հասկցայ որ նկարիչ մըն էր ան: Տղու մը պէս կուլար, եթէ լաւ կը յիշեմ, մինչ ինքը ձեզ կ'ըսէր թէ՛ մահը պատուիրած էր իրեն որ վրձինը վար դնէ տակաւին իր երեւակայութեան արդիւնքը պաստառին վրայ երեւան չեկած: Ես անոր աչքերուն մէջ տեսայ անձկութիւնը մինչ ան կը խօսէր իր կիսաւարտ նկարին վրայ: Այն ատեն ձեր գրպանէն հանեցիք թանկագին արժէթուղթերուն ծրարը և անոր ձեռքին մէջ դնելով ըսիք որ երթայ ովկէանոսին վրայ, շոգենաւին մէջ ու օտար երկիրներ, գտնէ իր առողջութիւնը և կորովը: Ան օրհնեց ձեզ և մեկնեցաւ: Դուք նստեցաք հոս, այս գրասեղանին առջեւ հառաչելով և անգամ մըն ալ ինծի չի խօսեցաք ընդարձակ ովկէանոսին եւ բարձրարժէտ լեռներուն վրայ: Հետեւեալ տարին երիտասարդ նկարիչը իր գործին գլուխը տեսայ, առողջութիւնը ու կորովը վերստացած: Ճիշդ իր աւարտումի հպումը կ'ընէր այն պատկերին, որ այնուհետեւ հազարաւոր հոգիներու խօսած է:

Նորէն քանի մը վայրկեանի լռութիւն տիրեց, յետոյ բրոֆէսօրը շարունակեց.

— Կը յիշեմ, ուրիշ իրիկուն մը, դուք մարդ մը բերիք ձեր գրասենեակը. ան գիտեմ որ նոր հանդիպած էր կեանքին մէջ մեծ յուսախաբութեան մը: Իր դէմքը մըթագնած ու դառնագին ժպիտ մը ունէր: Ես դասս կը սերտէի հազիւ զինքը նշմարելով, եւ երբ դասս աւարտեցի իր գլուխը այս հին գրասեղանին վրայ ծռած տեսայ. իր ամբողջ մարմինը կը թնդար հեծկտանքէն: Երբ նոյն գիշերը ձեր քովէն կը մեկնէր, լաւ կը յիշեմ որ ձեր ձեռքը ուժգնապէս սեղմեց եւ ըսաւ.

— Աստուած օրհնէ ձեզ, դուք ետ դարձուցիք ինձ իմ հաւատքս առ Աստուած եւ առ մարդ:

Եւ բրոֆէսօրը դառնալով ծեր մարդուն, իր ձեռքը մեղմիւ անոր ուսին դրաւ եւ ըսաւ.

— Զե՛ր կեանքը անյաջողութիւն մըն է: Ահա ասոնք են ձեր գրքերը, ոչ թէ

եղծանելի թուղթի վրայ գրուած, այլ անմահ կեանքերու վրայ : Ձեր գործը անմահ է :

Անոր մեկնելէն ետքը՝ ծերունին նստակրկին գրասեղանին առջեւ, պատուհանին դիմաց : Արեւմուտքի սեւ ամպերը փարատեր էին, եւ արեգակը անոնց մէջէն կը ցուար, փառքով ողողելով երկիրը, և մութ ամպերը սքանչելի փայլուն զանգուածներով վերածելով : Ժպիտ մը ցոլաց իր դէմքին վրայ, մինչ այսպէս յառած կը դիտէր մայրամուտի այդ փառքը. ան ատեն ծերունին մրմնջեց .

— Փառք որ իմ կեանքս ձախողուած մը չէ :

Ձրէզնօ

Թարգմ. Ա. ՈՍԿԱՆ

Հ Ա Յ Ե Ա Յ Ք Ն Ե Ր

Ս Կ Չ Բ Ո Ւ Ն Ք Մ Ը

Ներկայ քաղաքակրթութիւնը, իր ընկերային ու մտաւոր բարձր զարգացումովը, ընտանեկան ու հոգեկան կեանքի բարեշրջութիւնովը, նրութական ու ֆիզիքական բարեկեցութիւնովը, իր հիանալի գեղարուեստովն ու գրականութիւնովը, կարելի է դաւանիլ իբր ծնունդ գործակցութեան ոգիին : Հին դարերը ունեցան իրենց քաղաքակրթութիւնները : Բայց անոնք, բիրտ ուժի մարմնացումն էին սոսկ : Հին օրերու բանաստեղծութիւնը նրբացած ու ազնիւ զգացումէ զուրկ, գաղափարէ զուրկ, դիւցազուններու քաջագործութիւններուն դրուատիքն էր սոսկ, վայրենի երեւակայութեան մը ծնունդ : Ճարտարապետութիւնը հսկայ շէնքերու մէջ, լաւ կը պատկերացնէր ժամանակին ոգին : Հին դարերու քաղաքակրթութիւնը, և անոր ընձեռած վայելքները, ոչ թէ ամբողջ մարդոց ընկերութեան, այլ միայն ֆիզիքական բիրտ ուժի շնորհիւ ընկերային բարձր դիրքերու հասած և կամ ժառանգականութիւնով առանձնաշնորհուած անհատներու համար էին : Ու մարդոց մէջ մշտնջենապէս գոյութիւն ունեցող բնական ատե-

լութիւն մը՝ արգելք կ'ըլլար ճշմարիտ քաղաքակրթութեան մը երեւան գալուն : Ներկայ քաղաքակրթութեան հիմը դրուեցաւ սակայն ճշմարիտ կրօնքին գիտակցութիւնով որ իր այնքան բարոյացուցիչ ու այնքան յառաջդիմական առողջ վարդապետութիւններովը, աշխարհի վիճակը յեղաշրջեց բոլորովին :

Անոր սիրոյ ու հաւասարութեան գերազանցօրէն բարձր սկզբունքները՝ մարդուն ներշնչեցին գործակցութեան վսեմ ոգին, որուն շատ բան կը պարտի աշխարհ : Հին քաղաքակրթութեան մէջ կինը իբր ընկերային էակ՝ որ և է իրաւունքէ զրկուած կը նկատուէր, և այր մարդը անշունչ առարկայի մը կոշտ վերաբերումովը կ'ապրէր անոր հետ : Ներկային մէջ սակայն կինը ձեռք կ'երկարէ այր մարդուն, կը գործակցի անոր հետ, տունին մէջ ու տունէն դուրս և իբրեւ ընկերային ինքնուրոյն կարող անհատականութիւն, ընդհանուր մտաւոր և բարոյական զարգացումի գործին մէջ, կարեւոր ոյժ մը կը դառնայ : Կինը նորէն իբր մայր, իբր ամուսին և իբր քոյր, գթութեան հրեշտակ մը, խանդաղատանքի մարմնացում մը և զարգացումի մղիչ ոյժ մը կը դառնայ ու հիմը կը դրուի բարեկեցիկ արդի ընտանիքին (Home) որ հանրային մաքուր բարոյականի ստնտուն ու չափանիշն է միանգամայն : Հիանալի մէկ արդիւնքը չէ՞ր ասիկա գործակցութեան ոգիին : Ընտանիքէն դուրս, ընկերային կեանքի բոլոր երեւոյթներուն մէջ, նորէն շատ որոշ կը տեսնուին գործակցութեան հրաշալիքները :

Գործակցութիւնն է, երբ այսօր զարգացած քաղաքակիրթ Եւրոպան կամ Ամերիկան իրենց վայելած մտաւոր լոյսին վայելքներուն մասնակից ընելու համար Ափրիկէն, միսիօնարին ձեռքը Աւետարանը տալու ատեն, կուտան նաև նաև կրթական հաստատութեան մը բանալիները, մտաւոր զարգացումին համար :

Գործակցութիւնը չէ՞, երբ ֆառնէկիի պէս անմահ բարեբարներ իրենց անօրինակ առատաձեռնութիւնովը, ողորմածասի-

ութիւնը իր երբեմնի ստորնացնող ու վնասակար հանգամանքէն վեր հանելով, հանրային բարօրութեան ու զարգացումին սատարող վիճակի մը մէջ դրին: Հասարակաց գրադարանները, դպրոցները, թատրոնները, հիւանդանոցները ասոնց խօսուել ու կենդանի պացոյցները չե՞ն:

Հոս չի վերջանար սակայն գործակցութիւնը: Համերաշխ գործունէութիւն մը մարդկային ընկերութեան ամէն դասակարգերուն մէջ պիտի հաստատէ հաւասարակչուութիւն մը, նիւթական բարեկեցութեան տեսակէտով, որուն իբր օրհնաբեր հետեւանք, շատ մը տրտունջներ ու շարժքներ, որոնք ծնունդն են միայն նիւթական անհաւասարութեան, ինքնին գոյութիւն ունենալէ պիտի դադրին: Վարկած մը չպիտի սեպուի անշուշտ այս մտածումը, երբ պատմութեան էջերուն վրայ սերտուին ազգերու անտիճանական զարգացումի քայլերը, որոնց մէջ շատ որոշ պիտի տեսնուի գործակցութեան բարեբար դերը կեանքին յաջողութիւնները երաշխաւորող պայմաններուն համար: Թէ՛ տակաւին ուրիշ ի՞նչ ձեւի մէջ պէտք էր ըմբռնել ճշմարիտ գործակցութիւնը, շատ դժուար չէր վերլուծել: Գործարանատէրերու, գործաւորի կամ ուրիշ բաներով, դրամագլուխի եւ աշխատութեան մէջ շահի բաժանում մը՝ ֆաղ. Տնտեսագիտութեան տըրամադրած պայմաններուն համաձայն: Այս տեսակ արդար շահակցութիւն մը, հարուստ գործարանատէրին եւ աղքատ գործաւորին մէջ, շուտով պիտի ապահովէ նիւթական զիւրակեցութիւն մը գործաւոր դասակարգին համար:

Գործակցութիւն մը պիտի ըլլար նորէն, երբ փաստաբանութեան, երկրաշափութեան, բժշկութեան եւ ճարտարապետութեան պէս ազատ արհեստներ, երկրին տնտեսական վիճակին համեմատութիւնովը վճարուէին: Եւրոպայի ու Ամերիկայի մէջ բաւական մը իրականացած այս վերջին պարագան շատ տեղերնկատի առնուած չէ: Կը գտնուին փաստաբաններ, բժիշկներ, որոնք անխիղճ կեղեքումով մը, կարճ ժամանակի մէջ նիւթա-

կան անսպասելի դիրքերու տէր եղած են: Այս կերպ անհամեմատ վարձատրութիւններ ժողովուրդին տնտեսական հաշիւներուն վրայ ծանր բեռ մը կը դառնան:

Ու դեռ, նիւթականի տեսակետէն վեր ելլելով, ճշմարիտ գործակցութեան մը ոգին, ժողովուրդի մը համար, երաշխիքն է առողջ բարոյականի մը, որովհետեւ գործակցութիւն մը առանց վստահութեան ու հաւատարմութեան՝ սոսկ ջուրին երեսը շէնքի մը հիմերը դնելու երազը պիտի ըլլար:

Այսպէ՛ս երբ հարցուէր թէ ինչով կարելի է չափել համայնքի մը քաղաքակրթութիւնը, կարելի պիտի ըլլար ըսել, այդ համայնքին մէջ գոյութիւն ունեցող գործակցութեան ոգիով:

ԱՐՍԷՆ



ՉՍՐԼՍ ՀԵՏՏՐԸՆ ՍՓՐՃՐՆԻ ԿԵՍՆՔԸ

Սփրճըն՝ 19րդ դարու էն մեծ քարոզիչներէն մէկը, իրաւամբ «քարոզիչներու իշխանը» համբաւին արժանացած է: Սփրճընի գօրութիւնը եւ մեծութիւնը, իր մեծ հոգին հաստատ, կամքը և փայլուն տաղանդները Յիսուս Քրիստոսի նուիրելուն և ինքզինքը բոլորովին Անոր հետ նոյնացնելուն մէջ կը կայանայ: Սփրճընի կեանքը Յիսուսի կեանքին և Անոր Աստուածային սրտին հետ միացած, նոյնացած ըլլալուն՝ անոր սրտէն կեանքի աղբիւրներ կը բղխէր: Աստուծոյ խօսքին վրայ ունեցած հաւատքը այնքան զօրաւոր էր որ, իր քարոզներուն մէջ երբեք սկեպտականութեան նշաններ չէին երեւար: Անոր սիրոյն, մանաւանդ հոգիներու փրկութեան մասին ունեցած անսահման սիրոյն ովկէանը չափել անկարելի էր: Անոր սիրտը Քրիստոսի սիրոյ ովկէանին մէջ խորասուզած էր: Սփրճըն իրեւ քարոզիչ անզուգական էր մասնաւորաբար հոգիները մահուան և կորուստեան անդունդներէն կեանքի և փրկութեան առաջնորդելուն գերազանց կարողութեանը և յարմարութեանը համար:

Սփրճըն նկարագրի մասին շատ գերազանց բաներ ժառանգած է իր նախահայրերէն. հետեւաբար այդ մասին կ'արժէ քանի մը տող գրել: 1589ին Տանըմարքայի մէջ պատահած հալածանքի մը պահուն աքսորուած կարգ մը անձինք Անգլիա գաղթեցին: Սփրճընի նախահայրը անոնց մէջն էր: Ասոնք քրիստոնեայ, պատուաւոր և ժրջան անձեր էին: Սփրճընի մեծ հայրը 1726ին Հօլթիտի մէջ ծնած և 1844ին, իր 88 տարիքին մէջ մեռած է: 58 տարի քարոզչութիւն ըրած է, որուն 54 տարին սիւնոյն եկեղեցիին մէջ անցուցած է: Այսքան երկայն ժամամանակամիջոցի մը մէջ ժողովուրդին հետ երբեք երկպառակութիւն ունեցած չէ: Մանկութեան հասակէն մինչեւ իր վերջին օրերը հաւատքի մէջ հաստատուն, բարեպաշտ և պատուաւոր անձ մը եղած է ան: Իր հայրը ձօն Սփրճըն ալ՝ հոգեւոր պաշտօնեայ ըլլալով, մինչեւ իր 80րդ տարիքը բարեպաշտ և կարող մէկը եղած է:

Սփրճընի մայրն ալ խիստ քրիստոնեայ մէկն էր. իր աղուն հոգեւոր շինութեան յաջողութեան և ամէն կերպով զարգացման համար անդադար կ'աղօթէր: Չ. Հ. Սփրճըն իր 17 գաւակներէն էն տարիքովն էր, Չարլս 1834 յունիս 19ին ծնած է Քէլվէտօն որ իբր 2000 բնակիչ ունեցող գիւղ մըն է: Երբ տունէն հեռանալու չափ մեծցաւ, բնակութեան համար Սթէմպլերնի մէջ գտնուած իր մեծ հօրը տունը գնաց: Իր ամուրի մօրաքոյրերէն մին Չարլսի հոգատարութեան գործը իր վրայ առաւ, եւ քանի որ մեծ հօրը ուշադրութիւնն ալ վրայէն անպակաս էր, Չարլս սկսաւ խոհուն և մտացի տղայ մը ըլլալ, և իր գիրքերը խաղէն աւելի սիրել:—Քրիստիանոսի նամբօրդուքիւն անունով գրքին, և ուրիշ նման գրքերու մէջ գտնուած պատկերները ուշադրութեամբ և խորին հիացմամբ կը զննէր: Տղուն կանխահաս հանճարը ամէն մարդու ուշադրութիւնը կը գրաւէր: Իր մեծ հօրը և ուրիշներուն Ս. Գրոց մասին շատ զարմանալի հարցումներ կ'ընէր:

Երբ Սփրճըն տասը տարեկան տղայ էր,

Մր. Նիլ անունով Աւետարանիչ մը մեծ հօրը տունը եկաւ: Հոն այս հետաքրքիր տղուն հետ երկայն խօսակցութիւններ ունեցաւ եւ անոր հետ աղօթեց: Օր մը ընտանիքին անդամները ի մի հաւաքելով, Չարլսը իր գիրկը առաւ, և անոր համար հետեւեալ մարգարէական խօսքերը խօսեցաւ, զոր Մր. Սփրճըն մինչեւ իր կեանքին վերջը միտքէն չըզրցաւ հանել: «Չեմ գիտեր ինչու, սակայն ստուգիւ կ'զգամ թէ, այս տղան Աւետարանը հազարաւորներու պիտի քարոզէ և Տէրը զինքը տասը հազարաւորներու համար օրհնութեան միջոց մը պիտի ընէ: Այս մասին այնքան վստահ եմ որ, երբ օր մը Րօլէնտի ըլլուրին աղօթատեղիին մէջ առաջին անգամ քարոզէ, կը փափաքիմ որ՝ երգը առաջարկէ»: Այս մարգարէական խօսքերը բառ առ բառ կատարուեցան:

Իբրեւ իր ապագայ նկարագրին գրաւականը՝ իր մանկութեան մէջ սա քանի մը ընտիր եւ գերազանց բնաւորութիւնը ցցուցած է: Աստուծոյ տաճարին եւ սրբազան պաշտամունքին համար անչէջ սէր մը ունէր, ոչ թէ միայն եկեղեցի երթալու յօժարութեամբ, այլ հոն գտնուիլ երջանկաւէտ բան մը սեպելով իրեն: Ճշմարտութեան հանդէպ խորի սէր մը կը տածէր. երբեք չստեց. ճշմարտութիւնը չը ծածկեց կամ չուրացաւ: Խիստ աղօթասէր էր, շատ անգամ չոր խոտի մը վրան կամ մսուրին մէջ աղօթելու վրայ կամ բարձրաձայն կարգալու, եւ կամ եղբայրներուն եւ քոյրերուն քարոզելու վրայ կը գտնուէր: Իր զգացումները զօրաւոր ու կամքը հաստատուն էր: Մանկութեան ատեն իրեն կրթութեան համար մասնաւոր ինամք տարուած է և ինքն ալ այդ մասին մեծ ջանք և եռանդ ցցուցած է:

Սփրճընի փոխուիլը: Իր կեանքին մէջ եղած փոփոխութիւնը ինք սապէս կը պատմէ, «կանուխ զգացի թէ մեղաւոր եմ, շատ տեղեր, շատ կերպերով հոգիի փրկութեան միջոց մը փնտռեցի, սակայն ոչ մէկտեղ գտայ: Եկեղեցիէ եկեղեցի վազեցի, սակայն աւաղ փրկութեան վրայով բան մը չը լսե-


ցի: Այո՛, այդ եկեղեցիներուն մէջ շատ մեծ ճշմարտութիւններ կը քարոզուէին, բայց անոնց մէջ հոգեւոր փրկութեան ճամբուն վրայով տեղեկութուն մը չկրցայ ունենալ, սկսայ յուսահատիլ, վերջապէս ձիւնապատ օր մը այնքան ձիւն իջաւ որ երթալու տեղս չի կրցայ երթալ, ճամբան կեցայ և մօտը դտնուող մեթոսական եկեղեցին մտայ, հոն քարոզիչը հոգիի փրկութեան ճամբուն վրայով կը քարոզէր. աչքերը ուղղակի իմ վրաս յառելով, «ո՛վ երիտասարդ, դուն նեղութիւն կրելու վրայ ես, բայց եթէ Քրիստոսի նայելու ըլլաս վստահ եմ թէ երբեք դուրս պիտի չնետուիս», յետոյ ձեռքերը վեր վերցնելով «նայէ, նայէ, միայն նայէ», ըսաւ: Այդ ատեն հոգեկան փրկութեան ճամբան տեսայ. և փրկուեցայ»:

Քարոզի մասին սապէս կ'ըսէ. «այն քարոզիչը որ առանց մեղաւորներուն բան մը ըսելու կը քարոզէ, կը խորհիմ թէ ան չգիտեր թէ ինչպէս պէտք է քարոզել»:

Ի պրոցական կեանքին մէջ կարգ մը կրօնական տարակոյսներ երկայն ժամանակ զինքը մտատանջութեան մատնեցին, սակայն Աստուծոյ օգնութեամբ կորստեան այդ վիհէն ալ ապահով ազատեցաւ: Ազատախոհներուն համար կ'ըսէ. «Նս ալ անոնց պէս եղայ, եղաւ ժամ մը երբ հաւատքիս խարխալը թող տուի, և համոզումներուս պարանը կտորեցի, ինքզինքս այլեւս ներշնչման ծովեզրքը պինդ կապերով չկապեցի, թոյլ տուի որ նաև ծովերուն և մրրիկներուն առջեւ քշուի տարուի, անա այսպէս ուրացութեան ճամբորդութիւնը սկսայ. սակայն փառք Աստուծոյ, հիմա ամէն բան անցած է, բայց անոր համառօտ պատմութիւնը ըսեմ, այդ վիճակը ազատախոհութեան փոթորկալից ծովուն վրայ աճապարանօք ուղեւորութիւն մըն էր: Անոնք որ յաճախ սատանին որոգայթներուն կ'ենթարկուին, երբ վրկարար սիրոյ և ազատարար շնորհաց երգը երգելու համար կը փախչին, անոր թունալից սլաքներէն և մահացու նետերէն կ'ազատին»:

Հաւատքով եղած փրկութիւնը Սիբրընի հոգին գրաւեց և անմիջապէս սկսաւ շարութեան, խարդախութեան, եւ անհաւատութեան դէմ հաւատքի գէնքերով պատերազմիլ, և երկնից թագաւորութեան սերմը ցանել դպրոցներու, թաղերու, փողոցներու գլուխը եւ դարցնութեան մէջ. դպրոցին մէջ այնքան եռանդով եւ այնքան գրաւիչ դասեր կ'ընէր որ քիչ ժամանակի մէջ աշակերտներու հոծ բազմութիւն մը հաւաքեց իր գլուխը:

Ա. Մ. ԹՈՐՈՍԵԱՆ
(Մնացեալը յաջորդ քիւով)



ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՄԵՑ ՀՍԿԱՆ

ԲՆՈՒԹԵԱՆ ՄԵԿ ԶԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆԸ

Մարդկային ամենահսկայ ու ամենաբարձր արարածը ռուսիացի մըն է: Այս միջոցիս ան Պէրլինի մէջ կը գտնուի. իբր հիւր Բրոք. Ֆէլիքս Փօն Հիւլէնի, որ մարդաբանական ընկերութեան նախագահն է: Այս հսկան մօտերս Ռուսիոյ Քիւսճէք քաղաքին մէջ գտնուեցաւ, ուր խաղաղիկ կ'ապրէր իր ծնողքին քով կատարելապէս անտեղեակ թէ, աշխարհի մէջ հազարաւոր մարդիկ ուրիշ հետաքրքրուէին տեղեկանալու իր գոյութեան, եւ ապշութեամբ պիտի դիտէին իր հսկայական մարմինը:

Այս հետաքրքրաշարժ անձին անունն է Ֆէօտօր Մէխով, որ ոչ միայն աշխարհի մէջ ապրող մարդոց ամէնէն խոշորն է, այլ նաեւ իր հասակով կը գերազանցէ անցեալ երկու սերունդներուն մէջ երեւցող հսկաներն ալ: Թէպէտ դեռ 22 տարեկան է, բայց իր հասակը ունի 7 տք 9 ինչէզ բարձրութիւն մը, եւ մարմնին ամէն մասերը շատ կանոնաւոր կերպով համեմատական են հասակին հետ: Մինչեւ հիմա 100ի չափ բժիշկներ և գիտուններ չափած են զինքը, և իր սրունքները կարելի եղած ամէն ձեւով լուսանկարուած են:

Պէտք է զիտել տալ որ, մինչեւ հիմա

Եւրոպայի մէջ ցուցադրուած հսկաներուն բարձրութիւնը եղած է 4էն 6 ինչէզ պակաս՝ Մէխովի բարձրութենէն : Ատոնց միջին բարձրութիւնը եղած է 6 ոտք 10 ինչէզ :

Մէխովի ծնողքը, երկու եղբայրները և մէկ քոյրը և ոչ մէկ նշան կը կրեն իրմէ եւ ունին մարդու բնական կազմուածք : Իր մեծ հայրը միայն խոշոր մարդ սը եղած է, բայց ոչ հսկայ կոչուելու չափ : Կ'ըսուի սակայն թէ, իրեն հետ կապ ունեցող նախորդ սերունդներու մէջ եղած են խոշոր մարդուն մոյջներ :

Մէխովի հագած կօշիկները այնչափ խոշոր են որ, հասարակ մարդ մը եթէ հագնի անոնցմէ մէկը, մինչեւ ծունկերը կը հասնի, մինչդեռ տասերկու տարեկան տղայ մը հանգիստ կերպով կրնայ մտնել անոր մէջ : Եւ մատնին զօր կը զնէ հսկան, իր աջ ձեռքին ցուցամատը, այնչափ խոշոր է որ, նարտի փուլ մը կրնայ անոր ծակէն անցնիլ : Այս... խոստամալից երիտասարդը, ամէն նստելուն Յ քիլօ մին կ'ուտէ, անոր հետ նաեւ նոյն համեմատութեամբ բաթաթ, բանջարեղէն և հաց, ապշեցուցիչ խորթակով մը : Այս պատճառով, դիւրին է երեւակալել թէ, այս հուշակաւոր օրկորը շուտով մոխրի վրայ կը նստեցնէ իր հիւրասէրը եզող բրոֆէսէօտը, եթէ սակայն անոր ամբողջ խոհանոցը իր ստամոքսը փոխադրելէ ետքը՝ կահ կարասիներուն ալ վտանգ չսպառնայ :

ԻՍԿ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՏԱՐՈՐԻՆԱԿ ՄԱՐԴԷ

ՈՐ ՀԱՒԱՆԱԿԱՆԱԲԱՐՈՒ

300 ՏԱՐԻ ՊԻՏԻ ԱՊՐԻ

Ինտիանա նահանգին Ռէտնօր քաղաքը կը պարծի մարդկային հրաշալիքով մը, յանձին Գլայի Հարների, քսանըչորս տարեկան երիտասարդ մը, որ մարդկային սովորաբան կան հասակին մէկ վեցերորդին միայն կրողած է հասնիլ մինչեւ հիմա : Այս միջոցիս ան կը զբաղի այբենարանը սորվելով և հազիւ կրնայ մինչեւ տասը համբել : Նախընթաց տասնըինը տարիներու միջոցին ան միմիայն

չարաթը երեք պնակ կերակուր կերած, 24 ժամ քնացած, 24 ժամ խաղացած է, առանց ամենափոքր փոփոխութեան : Թէպէտ 24 տարեկան է, սակայն հագիւ հինգ տարեկան տղու մը երեւոյթը ունի, և հասակին բարձրութիւնն է՝ 36 ինչէզ : Իր մտաւոր ու ֆիզիքական զարգացումը սովորականին 1/6 համեմատութեամբ եղած է, մինչդեռ ուրիշ ամէն տեսակէտներով կատարել : Մարդկային այս հրաշալիքը ծնած ատեն երեք տարեբութիւն չէ ունեցած սովորական տղոցմէ : Մինչեւ հինգ տարեկան ան կը մեծնայ օրինաւորապէս, բայց այդ տարիքին հասածին պէս, յանկարծ իր զարգացումը զարմանալի կերպով մը կը կասի :

Բնականաբար իր վիճակը ուշադրութիւնը պիտի գրաւէր երեւելի բժիշկներու եւ գիտնականներու, որոնք սա համոզումը յայտնած են թէ այս հուշակաւոր արաբածը երեք դարի չափ պիտի կրնայ ապրիլ : Քէմպլը անուիով բժիշկ մը, որ շատ զբաղած է այս զարմանալիքին զննութեամբ, հաստատ համոզում ունի այս մասին : Ան կ'ըսէ. — Այս տղան 300 տարի պիտի ապրի, այնչափ հաստատապէս, որչափ ես 60 տարի ապրած եմ : Տարիները կը սահին անոր վրայէն, բայց ան չծերանար : Իր մարմինին մէջ քիմիական ամէն փոփոխութիւն՝ սովորականէն մէկ վեցերորդ անգամ տկար կը յառաջդիմէ : Ինչու համար ուրեմն սովորական անձէ մը 6 անգամ աւելի չպիտի ապրի : Ան չմաշիր, ան կ'աճի՝ դանդաղօրէն, բայց վրաստահօրէն (slowly, but surely, անգլիական ծանօթ ասացուածին համեմատ) : 6 տարին, անոր համար, բնախօսական կազմակերպութեան տեսակէտով, այն բանն է՝ ինչ որ է մէկ տարին սովորական անձի մը համար : Կետեւաբար 300 տարին ալ՝ անոր նոյն բանը պիտի ըլլայ, ինչ որ է 50 տարին պարզ մարդու մը համար : Ասիկա որչափ ապշեցուցիչ, այնչափ ալ սակայն անյեղի կերպով գիտական է : Այս տղուն կեանքի ասպարէզը պիտի զարհուրեցնէ ամբողջ աշխարհը : Ուշադրութիւն ըրէք թէ ինչ կ'ըսեմ :

Երբ մարդկային այս հրաշալիքը հասնի 200 կամ 300րդ տարիքին, արտասովոր կերպով փայլուն մէկ նմոյշը պիտի ըլլայ մարդկութեան :

Վ Ե Ր Ա . Կ . Պ Ե Տ Ի Կ Ե Ա Ն Ի

Յ Ի Շ Օ Ս Ա Կ Ի Ն

Ողբացեալ Վեր . Ա . Կ . Պետիկեանի յիշատակին կատարուած պաշտօնին , որ տեղի ունեցաւ կիրակի օր , ժամը ութին , Պայպլ Հառուսի մատուռին մէջ , փութացած էին երկսեռ հոծ բազմութիւն մը , մեծարելու համար անոր յիշատակը : Մատուռը նեղ կուգար ներկաներուն և շատեր կը ստիպուէին զուրսէն դիտել :

Բեմին ճակատը կը զարգարէր Վեր . Պետիկեանի պատկերը , սեւ շարշներու մէջ աւնուած :

Պաշտօնը սկսաւ Տօքթ . Պարնրմի աղօթքով , ուրիշ ետքը Բրոֆ . Ճէճիգեան ուղերձի մը մէջ ի վեր հանեց հանգուցեալ պատուելիին՝ իբր քարոզիչ ունեցած մեծ արժանիքը , կարողութիւնները և զնահատելի առաւելութիւնները :

Բրոֆ . Ճէճիգեանէ ետքը՝ Տօքթ . Պարնրմ՝ անձնական յիշատակներով խառն , հայերէն լեզուով գողարիկ բանախօսութիւն մը ըրաւ , թուելով և զրուատելով Վեր . Պետիկեանի ազնիւ նկարագիրը և իբր նովիւ հազուագիւտ յատկութիւնները :

Անոր յաջորդեց Բրոֆ . Գրիգորեան . որ թուրքերէն լեզուով , խօսեցաւ անկեղծ ու մաքուր հոգիով մարդուն արժէքին ու այդ տեսակ մարդոց՝ արդի ժամանակներու մէջ շատ քիչ գտնուելուն վրայ : Ու իբր հազուագիւտ օրինակ , ցոյց տուաւ Վեր . Պետիկեանը , յարելով որ պէտք է յարգենք անոր յիշատակը , որչափ իր այդ ձիրքերուն , նոյնչափ ալ իր իբր կրօնքի հաւատարիմ ու խղճամիտ պաշտօնեայ ունեցած առաւելութիւններուն համար :

Վերջին խօսողն էր Տօքթ . Կրին , որ յիշատակելէ ետքը Վեր . Պետիկեանի ճշմարիտ արժանիքը՝ իր պաշտօնին մէջ՝ շեշտեց եկեղեցական արժանաւոր պաշտօնեաներու և այդ կողմին նուիրուելու փափաքին պակասը :

Ուղերձները կ'ընդմիջուէին երգերով , հանգուցեալ պատուելիին է՛ն սիրած եր-

գերը , որոնք կ'երգուէին համախումբ և երկսեռ խմբերգի մը կողմէ :

478 Ղրշ . ի պնակի հատոյթ մը՝ պիտի յատկացուի Բարձի գիւղին վարժարանին :



Պ Ր Ո Ւ Ս Ա Յ Ի Ո Ր Բ Ա Ն Ո Յ Ի Ն

ՁՐԳ ՏԱՐԵԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԳԵՍԸ

Ընտրեալ երկսեռ բազմութեան մը ներկայութեամբ՝ կատարուեցաւ տեղիս Որբանոցին ամսվերջի հանդէսը Յունիս 13/26 , կէսօրէն ետքը : Սրահը ճօխապէս զարդարուած էր . որբուսանողներու ձեռագործներուն մէջ աչքի կը զարնէին գորգաչինութեան , նուրբ ասեղնագործութեան եւ ձեւագիտութեան նմոյշներ , մանաւանդ որբուհիներու պատրաստած ներքին եւ արտաքին հանդերձեղէնները : Գողարիկ ցերեկոյթ մը եւ հաճելի ու օգտակար ժամանց մըն էր ամբողջ հանդէսը , որ սկսաւ Համիտիէ քայլերգով :

Ճառախօսները եւ իրենց նիւթերը հետեւեալներն են . Օր . Սաթենիկ՝ Արեալոյս , Օր . Իւղարեր՝ Բնուրեան գեգեցկուքիւնը , Օր . Չապէլ՝ մայրական սեր , Օր . Եսթեր՝ պանգուխսից մահը , Օր . Արուսեակ՝ գրագէտը Օր . Աղաւնի՝ առաջից ձրւնը , Օր . Էլիզա՝ բարեկամութիւնը եւ Օր . Մարիցա քասերաբեմը : Իսկ տրամախօսութիւններն էին , զանգատող ուսանողը , ճեղքիտ վաճառականը , միւսսեր պիւր իլան և լուացարարուհին : Հայ . եւ Անգլ . լեզուի , հաշիւի , Աշխարհագրութեան , շերամարուծութեան եւ ձեւագիտութեան պարզ եւ համառօտ քննութիւններ եղան : Ժամանակի սղութեան համար երգեհոնի , հիւանդապահութեան , խոհարարութեան եւ առտնին տնտեսութեան զանազան ծիւղերուն քննութիւնները զանց առնուեցան : Ասոնք բոլորը կ'ընդմիջուէին քառածայն եւ երկծայն քաղցր երգերով եւ փոքրիկներու խաղերով ու գոցերով : Վեհ . Կայսեր ձօնեալ երգով մը եւ Արժ . Տէր Չաւէն քահանայի պահպանիչովը հանդէսը փակուեցաւ : Յետոյ ներկաները պատուա-

սիրուեցան հաստատութեան զահլիճին մէջ, ուր երկու Ֆրանսացի կրօնաւորներու այցելութիւն եւս ընդունուեցաւ :

Ներկաները մեկնեցան խիստ նպաստաւոր ազդեցութեան տակ եւ բարեմաղթութիւններ ըրին Որբանոցին պահպանմանը եւ յարատեւութեանը համար : Որբանոցը այս տարի 15 տանտիկին օրիորդներ կուտայ Հայ հասարակութեան :

Անահնկալ մը պատրաստուած էր հասարակութեան, եւ որ էր՝ հանդիսականներուն մէջ տեսնել Օր. Թերեզա Մինասեանը, որ 20 տարի առաջ հինգ տարիի չափ այս հաստատութեան աշակերտելէ ետքը, արտասահմանի մէջ իր ուսումը յառաջ տանելով վկայականներ ստացած է իբր լեզուագէտ, դասակախար և քաջ հիւանդապահ : Օրիորդը բաց ի իր մայրենի և թուրքերէն լեզուներէն, գիտէ նաեւ Յունարէն, Անգլերէն, գաղիերէն, գերմաներէն, սպաներէն, լատիներէն եւ Արաբերէն և այս լեզուները ուսուցած է երկար տարիներ : Ուրախութիւն պատճառեց մեզ տեղեկանալ որ հաստատութեան հիմնադիրը յաջողած է որբուհիները գործնական հիւանդապահութեան վարժեցնել, յարմարագոյնները զրկելով Եւրոպական ընկերութեան մը հիւանդանոցները, Պոլիս, Երուսաղէմ, Աղեքսանդրիա : Ասով յուսալի է որ վարժ հիւանդապահուհիներու մեր կենսական պէտքը լեցուի :

Երանի թէ այս հաստատութիւնը հանրութեան ջերմ եւ գործնական սիրոյն աւելի առարկայ ըլլար գոնէ ասկէ ետքը, այս հաստատութիւնը՝ որ 30 տարիէ ի վեր անընդհատ, լոկիկ մնջիկ գործած է :

Պրուսա

ԶԱՊԷԼ

«Գիսակ»ի Մ'sածուքիւնքին, ինչպէս նաև իր լուսանկարին համար, այսուհետեւ պէտք է դիմել Երուսաղէմի Մարտիրոսեանի, Մահմուտ Փաշա, Ենի Չարչը, Թ. 206—29 :

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

Ելեկտրական ամերիկեան Ընկերութեան ներկայացուցիչ մը, Քոլորատոյի լեքանց մէջ՝ Բիք Բիքի գազաթիւն վրայ անարկու թնդանօթ մը պիտի զետեղէ տասերեք մատ տրամագիծով, բերանը դէպ ի երկինք : Այդ գործիքով պիտի փորձուի Չիքակոյի Հուայթնէյ բրոֆէսէօրին այն տեսութիւնը թէ երկրին մթնոլորտէն անդին ելեկտրականութեան անագին տարածութիւն մը կայ, ուրկէ մարդկային ճարտարագիտութիւնը պիտի կրնայ ելեկտրական ոյժի անագին հոսանքներ ձեռք բերել : Բրոֆէսէօրը մտադրած է իր թնդանօթով մեր մթնոլորտէն անդին զրկել մագնիսացած երկաթի գունտ մը, որուն կոչուած պիտի ըլլայ մետաղէ թիւ մը 30էն 50,000 մէթր երկայնութեամբ : Կը հաշուէ թէ երկրին ծանրութեան կամ ձգգողականութեան նահմանը անցնելով, այդ մագնիսացած գունտը պիտի քշուի միջոցին ելեկտրական ալիքներուն մէջ եւ թէ կարուած այդ թիւին միջոցաւ, կարելի պիտի ըլլայ ելեքտրական հոսանքներ փոխադրել երկրին մակերեւոյթին վրայ :



Միջիկանի տիեզերահոշակ համալսարանին բրոֆէսէօրներէն Մր. Պէլլէյ փոխանակիչի մը միջոցաւ հնարք մը գտեր է ելեկտրական ամէնէն զօրաւոր հոսանքը անմնաս ընծայելու : Փորձը կատարուեր է համալսարանին երկու ուսանողներուն վրայ, ատոնց վրայէն անցեր է հինգ հարիւր հազար շրջանով ելեքտրական հոսանք մը որ կրնայ հազարաւոր հոգիներ կայծակնահար ընել, բայց ուսանողները հաճելի զգացում մը միայն ունեցեր են, Այդ փոխանակիչը ձէթով լեցուն աման մըն է ուր կը խորատուգունին հաղորդիչ թիւերու ճախարակները : Այդ կերպով ձեռք բերուած ելեկտրական ոյժի անմնաստակարութեանը վրայ երկու տեսութիւն կան : մէկին նայելով հոսանքներու յաջորդութիւնը այնքան արագ է որ ելեկտրականութիւնը ժամանակ չունի մկանունքներուն և ջիղերուն վրայ գործելու : միւս տեսութիւնն ալ այն է թէ հոսանքը մարմինէն ներս չի մտներ, այլ դուրսէն կը հետելի անոր :

ԻԶՄԻՐԵԱՆՑ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԸ

կեղծ չեն, այլ կտրուած են, Լամարթինի մահուան թուականին, 1869ին:

ՍԻՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՄ

Բեղերսպուրկի մէջ հասարակաց թէնամի մը կը նկատուի սիրաբանութիւնը: Սիրաբանութեան հաղաւակորդներու էլիւպ անուն մարմին մը կազմուեր է, սիրաբանութեան դէմ կուռելու համար և արդէն իսկ իր առաջին նիստը գումարեր է: Այս քիւլպին կ'անդամակցին 37 երիտասարդներ, որոնք աշնուպետական ու սեղանաւորական դասակարգին կը պատկանին: Քիւլպին կանոնադիրը կը տրամադրէ որ անդամները անողոք կերպով հալածեն սիրաբանութիւնը և աներկիւղ, ցոյց տան անոր ծաղրելի հանգամանքը, միեւնոյն ատեն մատնանշելով առաջ բերելիք վնասը: Եթէ մոռնալով իրենք ալ սիրաբանեն, առաջին անգամուն 1000 ռուպլի տուգանք պիտի հատուցանեն, իսկ երկրորդ յանցանքին՝ 5000 ռուպլի: Այս տուգանքները բարեգործական նպատակներու պիտի յատկացուին: Երրորդ անգամուն՝ քիւլպէն պիտի վտարուին:

Հինգչարթի օրը, Ղայաթիոյ Խորհրդարանին մէջ, տեղի ունեցաւ Իզմիրեանց գրական հանդէսը, նախագահութեամբ Օրմանեան Ս. Պատրիարք Հօր և ներկայութեամբ եկեղեցական եւ աշխարհական բազմաթիւ ծանօթ անձնաւորութիւններու:

Սրահին ճակատը կը զարդարէր երկու հայ բարերարներու՝ աղա Յովսէփ Իզմիրեանցի և աղա Մկրտիչ Սանասարեանցի պատկերները:

Տ. Մկրեան Քհ. կարդաց տեղեկագիրը, որ Յանձնաժողովին երկու տարուան գործառնութեանց համառօտութիւնը կը խտացնէ:

Այս տարի մրցանակի արժանացան՝ Խաչիկ էֆ. Լեւոնեանի Աղքատաւայ կաթողիկոսներու պատմութիւնը եւ Սմբատ Մ. Վ. Սասնէթեանի Ներսէս Լամբրոնացի գործերը, որոնց հեղինակները 35ական ոսկի պիտի ստանան, 20 ոսկիի նուէր մըն ալ յատկացուցաւ «Բէնսէ»ի Պուլանք կամ Հարֆ գաւառ տեղագրական եւ ազգագրական երկասիրութեան:

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼԱՄԱՐԹԻՆԻ ՄԱԶԵՐԸ

Լամարթինի միտքէն կ'անցնէ՞ր թէ օրին մէկը մազերը պիտի ծախուէին աննշան առարկայի մը պէս: Սակայն իրողութիւն է ասիլա՝ Վերջերս երեւան հանուեր է Քըրանսացի բանաստեղծին մագնթէն մէկ քանի կրամ, 1854էն մնացած: Այդ մագնթը կը գտնուին Լամարթինի վարսավիրային քով, որ եսասէր մէկը չըլլալուն, 25 Քրանքի փոխարէն կը ծախէ բանաստեղծին մագնթէն խուրձ մը: Դիմուներուն վերջը չի գար. եթէ այսպէս երթայ, այժի մագնթն ալ իբր Լամարթինի մազ պիտի քշուին: Ի այց կը խորհուի արտօնագիր մը ձեռք բերել, հաստատող թէ վարսավիրային ծախած մագնթը

ՏԻԿԻՆ ՎԱՆՏԵՐՊԻԼԹԻ ՄՏԱՏԱՆՋՈՒԹԻՒՆԸ

Տիկին Վանտէրպիլթ, հազիւ ամուսնացած, գանգատ կը յայտնէ իր նիւթական վիճակին վրայ: 750,000 Քրանքի եկամուտ ունի միայն: Ու խորհիլ թէ այսքան մեծ հարստութեան տէր կին մը կը տրտնջայ, առարկելով թէ ամուսինը զէչ կը վարէ իր ելմտացոյցը: Մը. Վանտէրպիլթ 250 միլիոնի հարստութիւն մը ունի, որ 19 միլիոն եկամուտ կ'արտադրէ: Ատկէ մէկուկէս միլիոնը յատկացուած է Նիւ-Եորքի իր տան եւ ամուսնոցին, մէկուկէս միլիոն՝ իր զբօսանաւին, 500000՝ ախոսին, 2 միլիոնը Վանտէրպիլթի ազնկան, Մալպորու գուքսի հետ ամուսնացած, 1,250,000 Վանտէրպիլթի առաջին կնոջ, Այսպէս 11 միլիոն եկամուտէն 750,000 Քր. միայն կը մնայ տիկին Վանտէրպիլթի, որ չի գոհանար այսքանով:

ԾՈՄԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԳԱՐՄԱՆՈՒՄԻ ՄԻՋՈՑ

Սալթ Լէյքի բնակիչ Տըթ. Տէյվիտսըն անուն բժիշկ մը, կ'ուզէ առաջինը հանդիսա-

նալ կերակուրի ժուժկալողներուն մէջ, կը յուսայ 60 օր ծոմ մնալ, առանց բերանը դնելու ո եւ է սնունդս Բայց միակ նպատակ մը ունի, այն է բուժուիլ ծանրաչնչութենէ ու քրոնիկ ցնցղատապէ: Երեք շաբաթէ ի վեր բան չուտեր, բայց կատարելապէս առողջ է, միայն թէ քիչ մը նիհարցած է, ինչ որ զարմանալի չէ բնաւ, նկատի առնելով որ մարձու մի ու ելեկտրականութեան դարմանումի ենթարկած է ինքզինքը: Ամէն օր քիչ մը կը քալէ, ու մնացեալ ժամանակը բոլորովին հանգիստ կ'ընէ. փոքր քսնակութեամբ թորուած ջուր կը խմէ: Սալթ Լէյքի բնակիչներէն հինգերորդ անձն է ասիկա որ ծոմապահութեամբ կ'ուզէ բուժել ինքզինքը: Ատոնցմէ մէկը, Արթուր վան Մէթէր, բնաւ սնունդ չառաւ 40 օր 35 վայրկեան: Ինչո՞ւ համար 35 վայրկեան պիտի հարցընեն ընթերցողները.— որպէս զի տոբզ. Թաննըրի յաղթէ, որ 40 օր միայն ծոմ կեցած էր: Մ. վան Մէթէր ջրգողութեան կը տառապէր. իր ծոմապահութեան սկիզբը՝ 250 լիտր կը կռէր իսկ վերջը՝ 125 լիտր: Մէջքը 20 մատ բարակցաւ: Առողջապահիկ դրութեան հետեւելով կանոնաւորապէս, ծանրութիւնը աւելցաւ տասներեք օրուան մէջ: Ուրիշ մը ստամոքսատապէ բուժուեր է, 30 օր ծոմ կենալով: Իսկ մէկուն ալ քրոնիկ անմարսողութիւնը բուժուեր է, շնորհիւ 35 օր ծոմապահութեան: Այս տեսակ դարմանում մը կ'ընդհանրանայ Սալթ Լէյքի մէջ, յուսահատութեան մատնելով բժիշկները, մանաւանդ որ ամէնուն զիւրամատչելի դարմանում մըն է:

Ստացանք Սմբատ Դաւթեան Գործակալութեան կէտրդ հրատարակութիւնը, NOUVELLE MÉTHODE, deuxième livre Յրանսերէնի ուսուցման համար, արեւելցի (levantin) ուսանողներու գործածութեան յատուկ, աշխատասիրութիւն՝ Տիկին Սաթենիկ Տէր—Բարթողի, եւ իրապէս անունին ու ծրագիրին համապատասխանող լինամուած գործ մը:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Մ. ԼՈՒՊԷ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ

Մ. Լուպէ յուլիս 6ին Բարիզէ մեկնեցաւ դէպի Պուլօներ, ուր առաջին քարը դրաւ Լուպէ-աւազանին: Հոնկէ Կիւեհն յաժանաւը նստաւ Տուվր երթալու համար, թորփիլահալածներու ուղեկցութեամբ, ժամը 1ին հասաւ Տուվրի նաւահանգիստը, ուր ողջունուեցաւ անգլիական նաւարաժնին կողմէ: Մ. Լուպէ քարափին վրայ ընդունուեցաւ Քօննօրի Դուքսին, Փրանս. դեսպան Մ. Բօլ Գանպօնի եւ Բաղաքապետութեան կողմէ: Ընդունելութիւնը եղաւ արքայական տաղաւարին մէջ: Անհուն բազմութիւն մը ծափահարեց Մ. Լուպէն: Ժամ 2.30ին Նախագահը Տուվրէն մեկնեցաւ արքայական կառախումբով և Լոնտոն հասաւ ժամը 4ին: Կայարանին մէջ ընդունեցին զինք Էտուարտ Թագաւորը, Կալէսի իշխանը, Քէմպրիճի դուքսը, Շլէզվիկ Հօլշթայնի Գրիսոլիան իշխանը, եւ Լոնտոնի դաւառին կառավարիչ Ֆայֆի դուքսը: Նախագահը և Թագաւորը կառք նստան և զացին Սէնթ Ճէյմսի պալատը որ յատկացուած է Մ. Լուպէի եւ իր հետեւորդներուն բնակութեան: Մ. Լուպէի կ'ընկերանայ արտաքին գործոց նախարար Մ. Տէլքասէ: Նախագահը քանի մը վայրկեան ետքը այցելութիւն տուաւ Թագաւորին եւ Թագուհիին Պըքինկէմի պալատին մէջ եւ արքայազուն իշխաններուն՝ Մարլպօսօ Հաուզի մէջ: Ժամը 5ին Մ. Լուպէ Փրանսական դեսպանատան մէջ ընդունեց Փրանսական գաղթականութիւնը: Ահագին բազմութիւն մը ծափահարեց Մ. Լուպէն: «Կեցցէ՛ Յրանսա, կեցցէ՛ Լուպէ» պօռացին: Պըքինկէմի պալատին մէջ Թագաւորին եւ Թագուհիին կողմէ տըրուած հացկերոյթին, Մ. Լուպէ բաժակաճառ մը արտասանելով յանուն Յրանսայի շնորհակալութիւն յայտնեց Անգլիոյ Թագաւորին և Թագուհիին, այն համակիր ընդունելութեան համար որուն առարկայ եղաւ: Ըսաւ որ կրկու ժողովուրդներու բարեկամական յարա-

բնութիւնները աւելի եւս պիտի ամրապնդուին եւ պիտի երաշխաւորեն աշխարհի խաղաղութիւնը :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Կ'ըսուի թէ Ամերիկայի արտաքին գործոց նախարար Մր. Հէյ պիտի հրատարի հրէական խնդիրին հետեւանքով : Շատ նեղացեր է որ ռուսեւամերիկեան խնդիրը լըրագրական վիճարանութիւններէն դիւանագիտական միջադէպի մը երեւոյթը առաւ, նախաձեռնութեամբ Մր. Բուզվէլչի : Հըրեաներու պաշտպան ամերիկեան թերթերը կը յայտարարեն թէ Ռուսիա իրաւունք չունի Գիշնէվի զէպքերուն իրբեւ արդարացում մէջ բերել Ամերիկայի Լինչի օրէնքը, մաքային խտութիւնները : Լինչի օրէնքին զայով, բովանդակ Ամերիկայի մէջ կը գատապարտուի անիկա, եւ ասկէ զատ ամերիկեան Նախագահը մինչեւ մէկ աստիճան իրաւունք ունի խառնուելու երկրին օրէնքներուն, մինչ Չարը ամենակարող է իր երկրին մէջ : Մր. Բուզվէլչ օրոշեր է Աղերագիրը Ռուսիոյ շրկել, հետն ալ Մանուցագիր մը, որ առաջին անգամ պիտի ներկայացուի :

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Մինչ պաղութիւնը կ'աւելնայ հետզհետէ Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներուն միջեւ, Գիշնէվի զէպքերուն եւ Մանչիւրիոյ խնդրին առթիւ, Գերմանիա կը փութայ բարեկամութեան նոր ապացոյցներ շոյելել Միացեալ Նահանգներուն : Գիլի փառաւոր ընդունելութենէն վերջ, որ եղաւ ամերիկեան նախաժամին, Վիլհէլմ կայսրը հեռագիրով իմացուց ամերիկացի ծովակալ Քաթընի թէ գալ տարի, Սուլիի Յուցանդէպին առթիւ, իր եղբայրը՝ Բրուսիոյ Հայնրիհ իշխանը եւ իր օրդին՝ Ատալպէթ իշխանը մասնաւոր նաւախուժորով մը Ամերիա պիտի շրկէ փոխադարձ այցելութեան :

ՌՈՒՍԻԱ

Ռուսիոյ պատերազմական նախարար Քորոբաթքին զօրավարը յանկարծ Բեթերս-

պուրկէն մեկնուի է, Կայսեր մէկ հրամանին վրայ, նաեւ իր ուղեւորութեան ծրագրին մէջ կարեւոր փոփոխութիւններ ըրած է : Կ'ըսուի թէ Քորոբաթքին զօրավարին Նիքոլայեւիք այցելելուն նպատակն էր՝ աչքէ անցընել ամրութիւնները, վասն զի այդ քաղաքը, երբ Ճաբոնի ու Ռուսիոյ միջեւ պատերազմ ծագի, մասնաւոր կարեւորութիւն մը պիտի ունենայ :

Ա Ն Գ Լ Ի Ա

Անգլիոյ ծովային նախարարութիւնը ծըրագիր մը ներկայացուց Երեսփ. Ժողովին՝ ութ միլիոն անգլիական ոսկի արտօնութիւն խնդրելով նաւատորմին վերաբերեալ շինութիւններու համար : Յայտարարեց թէ այդ գումարին 1,251,000ը պիտի յատկանայ նոր շինութեանց եւ մնացածն ալ հիմա կատարուող շինութեանց ամբողջացմանը : Երեսնէսի նաւակայքը նորոգութեան կեդրոն մը պիտի ըլլայ թորփիլանաւերու եւ թորփիլանայածններու նորոգութեան : Չաթամի նաւակայքերը պիտի բարեփոխուին եւ ուրիշ նաւակայքերու շինութեանը պիտի ձեռնարկուի : Երեսփ. Ժողովը ընդունեց խընդրուած վարկը :

Ի Տ Ա Լ Ի Ա

Արտաքին գործոց նախարար Մորին ծովակալը նախարարաց Խորհուրդին հաղորդեց այն ճառը զոր Վիքթոր Էմմանուէլ թագաւորը պիտի արտասանէ Էլիզէի պալատին մէջ, Բարիզ կատարելիք ուղեւորութեանը առթիւ : Նախարարաց Խորհուրդը հաւանութիւն յայտնեց այդ ճառին՝ որ ներշնուած է Ֆրանքեւիտալեան սիրալիր եղբայրակցութեան զգացումէն :

Կը ծանուցուի թէ Վիքթոր Էմմանուէլ թագաւորը Բարիզ ուղեւորած պահուն Էլէնա թագուհին ալ Վենետիկ պիտի երթայ՝ քանի մը օր մնալու Մարկարիթա մայր թագուհիին մօտ : Իտալիոյ թագաւորը Բարիզէ վերադարձին Վենետիկ պիտի երթայ, անկէ Էլէնա թագուհիին հետ Հռոմ հրթալու համար :

Ս Ե Ր Պ Ի Ա

Նոր պալատին մէջ Բեդրօ Ա.ի կողմէ տրուած սեղանին երկու հարիւր երեսփոխաններ, ծերակուտականներ եւայլն կային: Թագաւորը ընդարձակ բանասօսութիւն մը արտասանեց. յոյս յայտնեց թէ պիտի յաջողի Սերպիան ազատել՝ ներկայ դժուարութիւններէն եւ անոր կացութիւնը ամրապնդել ամէն կերպով թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին գործերու մէջ, քաղաքական ու տնտեսական տեսակէտներով, միանգամայն յարգելով տիրող օրէնքները: Նախկին Օբրակոյտին ատենապետ Մ. Վէլիմիրովիչ որ հինաւուրց արմատական մըն է, թագաւորին պատասխանեց, ներկաներուն անուշով, ուրոնք համակրական ամենաշեղծ արտայայտութիւն մը ըրին Բեդրօ Ա.ի: Հացկերոյթը երեք ժամ տեւեց. յետոյ ներկաները Սերպիոյ ազգային պարը պարեցին: Թագաւորը երկար տեսակցութիւններ ունեցաւ քաղաքական ամէնէն նշանաւոր անձնաւորութեանց հետ:

ՊԱՊԸ ՄԱՀԱՄԵՐՁ

Հետեւեալ հեռագիրները կը հաղորդուին Պապին հիւանդութեան մասին. — Կարտինալ Վանուսթէլլի վերջին Խորհուրդը մատակարարեց Պապին եւ վերջին արձակումը տուաւ: Հիւանդը հետզհետէ կը կորսնցնէ իր գիտակցութիւնը: Վայրկեանէ վայրկեան մահուանը կը սպասուի:

Ո եւ է զգալի փոփոխութիւն տեղի չունեցաւ Պապին վիճակին մէջ: Սրտին եւ թոքերուն վիճակը անփոփոխ է: Սակայն եւ այնպէս բժիշկները ամէն յոյս կտրած են:

Վերջին օրեր հրատարակուած տեղեկագիր մը կ'ըսէ թէ Պապը հանդարտ գիշեր մը անցուց: Շնչառութիւնը հանդարտօրէն տեղի կ'ունենայ: Տկարութիւնը կը շարունակէ ազդել ամբողջ գործարաններուն:

Պապին հիւանդութիւնը պաղառութեան մը հետեւանք է: Հինգշաբթի գիշեր անձրեւ եկած էր, ուրբաթ առտու Լէոն ժ.Գ. վա-

տիկանի պարտէզը իջաւ ժամը Տին, եւ կէս ժամ խոնաւ օդին մէջ սպասեց իր կառքին, որ ժամը 8-30ին պատրաստ գտնուելու հըրաման ստացած էր: Այդ գիշեր պապը երկար նուազում մը ունեցաւ եւ Տքդ. Լաբդոնի կանչուելով գիշերը Վատիկան անցուց:

Ասիկա եղաւ հիւանդութեան սկզբնաւորութիւնը:

Կիրակի իրիկուն Պապին վիճակը ծանրացած ըլլալով, Հոռոմ գտնուող բոլոր կարտինալները հրաւիրուեցան ներկայ գտնուիլ Պապին վերջին Հաղորդութեան արարողութեան: Երեսուն եկեղեցականներ ներկայ էին հիւանդին սենեակը, ուր Հաղորդութիւն մատակարարուեցաւ: Բոլոր եկեղեցականները ձեռքերնին վառած մոմքր ունէին: Հաղորդութիւն տրուելէ վերջը, կարտինալներէն մէկը աղօթքներ ըսաւ: Շատերը կուլային: Բոլոր կարտինալները Պապին առջեւէն անցան, ձեռքը համբուրելով: Մէջերնէն մէկը ըսաւ. «Մեր աղօթքները ձեզ պիտի փրկեն»: Լէոն ժ.Գ. աչքերը բանալով պատասխանեց. «Ես դէպի յաւիտենականութիւն կ'երթամ»:

Կարտինալ Օրէկլիա, որ Պապին մահուանէն վերջը Վատիկանի գործերը պիտի վարէ մինչեւ նոր պապին ընտրութիւնը, մնայուն կերպով Վատիկան հաստատուեցաւ: Կարտինալը կիրակի առտու խորհրդակցութիւն մը կատարեց Կարտինալ Ռամբոլլայի եւ Կարտինալ Կոթթիի հետ, որ Պապութեան ամէնէն հաւանական ընտրելին կը նկատուի Յետոյ Կարտինալ Օրէկլիա առանձնացաւ Պապին հետ: Կ'ըսուի թէ այդ առթիւ իրեն յանձնուեցան Վատիկանի զբամները պարունակող զբամարկղին բանալիները:

ՏԻՐ ԵՒ ՏՃՈՐԿԻ

Հ. ՍՏԵՓԱՆ Խ. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագ. ՆՇԱՆ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պապը Ալի ճաճճէսի Իզգամ լրագրին դիմ քիւ 88

Handwritten text at the top of the page, possibly a title or header.



Large, bold, stylized characters, likely a title or a significant heading.

Another line of large, bold, stylized characters, possibly a subtitle or a specific reference.

Text block below the large characters, possibly a date or a specific identifier.

Text block below the date, possibly a name or a location.

Text block below the name, possibly a title or a specific reference.

Text block below the title, possibly a date or a specific identifier.

Text block below the date, possibly a name or a location.

Text block below the name, possibly a title or a specific reference.

Text block below the title, possibly a date or a specific identifier.

Text block below the date, possibly a name or a location.

Կ'ուզէ՞ք ունենալ ըժպելի մը ատան եւ սննդարար ,
 Կ'ուզէ՞ք խմել նեկտար մը հոսավիտ եւ առողջարար ,
 Կ'ուզէ՞ք ամառուան տօթագին օրերուն զովանալ ,
 Գնեցէ՞ք եւ խմեցէ՞ք խառնուրդ քեյերը զուարդարար :

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

Ընթիւ, ատան եւ հոսավիտ

Թ Է Յ Ե Բ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

Վանառասան

քեյի խառնուրթներ

Միտ ատան ու քարմ

Կ . Պոլիս , Պահէ Գարու , Ճէլալ Պէյ խան , Թիւ 10

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Տ Պ Ա Ր Ա Ն Ը Փոխադրուած ըլլալով՝

ՊՈՒՍ, ՊԱՊԸ ԱՆԻ ՃԱՏՏԷՍԻ, ԹԻՒ 35. ԻԳՏԱՄ ԼԵԱԳՐԻ ԴԷՄ

Մտացած է տպագրական ճոր

Կազմակերպութիւններ եւ կը սպարէ ամեն
 տեսակ գիրքեր, մահ-
 ազդեր, հանդէսներ, օրագրեր, հարսանիքի հրապարակներ,
 նամակագրութիւններ . այցաբարդեր, եւ սպարութեան վերաբերեալ ա-
 մեն տեսակ պիտոյքներ : — Տպարանին սեփական 20000 անկի
 պատկերները յանախորդաց տրամադրութեան տակ են ձրի :

Անմրցելի մաքրութիւն եւ հեղապահութիւն :

Գաւառներէն ալ կ'ընդունի ամեն տեսակ յանձնարարութիւններ :